



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



6705 RAM 1

11 MAR 2013

15338

Բ. Ա. ԲՈՒԴՐՈՒՐԵԱՆ

20 JUL 2010


500  
10-ԲՊ

575.4  
Բ-91

# ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒԻ



1002  
612



Ա.-ՊԵՏԵՐԲՈՒՐԴ  
«ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ՑՊՈՐՈՆ»

1904

Ա.Ռ.ՋԱ.ԲԱ.ՆԻ ՓՈԽԱ.ՐԷՆ

Գոյութեան կոհւը չափազանց զգալի է դարձել թէ  
ընդհանրապէս կենդանական աշխարհում թէ առանձնա-  
պէս մարդկային սօցիալական կեանքում:

Եյդ համաշխարհային մրցումը նկատելի է նոյն իսկ  
գիտութեան մէջ, թէև զիտական փաստերն ու ճշմարտու-  
թիւնները ընդհանուր են բոլորի համար էլ թէև նրանք  
միանդամայն ակներեւ, անաչառ ու անտարբեր են թէ  
մարդկանց և թէ բոլոր կենսական պահանջների վերա-  
բերմամբ:

Եյ՞ո, զիտութիւնն ինքն ըստ ինքեան անաչառ է.  
նա իր մշտական առաջադիմութեան ընթացքում հեռու  
է մնում միակողմանի հոսանքներից: Նա անտարբեր է,  
ինչպէս ինքը բնութիւնը:

Մարդկային բարօրութեան համար ամենից առաջ  
միութիւն է հարկաւոր որբան շատ լինի մարդկանց հա-  
մերաշխութիւնը, փոխադարձ կարեկցութիւնն ու սէրը  
այնքան լաւ է:

Բայց հարկաւոր է միանալ ոչ թէ թշնամութեան  
համար, այլ յանուն փոխադարձ սիրոյ: Վայ նրան, ում  
այդպիսի միութիւնը վտանգաւոր ու վնասակար է թւում:

Պէտք է աշխատել այդպիսիներին էլ դարձնել ընդ-  
հանուր միութեան մասնակից:

Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Պետերբուրդ 1903 թ.

«Պушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



«Մի անիր ուրիշին այն, ինչ որ չես  
ուզում որ քեզ անեն»:  
«Ուժը իսկական ոլժի մէջ չէ, ալլ սիրոյ»:  
«Բոլորն էլ ապրելու իրաւոնք ունին»:

## Ա.

Խւրաքտնչիւր աղգութիւն, որքան էլ քաղաքակրթուած և առաջադէմ լինի, այնուամենալիւ մի ամբողջութիւն չի ներկայացնում. նրա բոլոր անդամները միևնույն մակերևոյթի վրա կանգնած չեն լինում: Նրա զանազան մասերի զարգացման աստիճաններն էլ զանազան են լինում:

Նոյն իսկ ֆրանսիան, չնայելով իր ներքին առաջադիմութեանը ամբողջ XIX-րդ դարի ընթացքում, չնայելով կատարուած երկու մեծ լեզափոխութեանը և քաղաքական-հասարակական կեանքի առաջ մղած նշանաւոր գործիչների անդադրում չանքերին, մի համակերպ ամբողջութիւն չի ներկայացնում: Նա էլ բաղկացած է բաղմազան մասնիկներից, տարբեր դասակարգերից:

Եւ այդ տարբերութիւնը նկատելի է ոչ միայն գիւղական, այլ նաև քաղաքացին աղգաբնակութեան շրջաններում: Հասարակապետական զարգարները միայն վերջին ժամանակներս մատչելի են դարձել և զիւղացիների համար:

Մի տեղ լոյս է, մի ուրիշ տեղ խաւար: Մարդկանցից մէկը գործում է միւսին հակառակ: Վճառում է մարդկանց մի խումբը մի ուրիշ խմբի, մի հասարակութիւն՝ մի ուրիշ հասարակութեան: Այս, մի տեղ լոյս է, մի ուրիշ տեղ խաւար:

Միշտ և ամեն տեղ կոխւ է տեղի ունենում, գոյութեան անողոք կոխւ: Անուշաղրութեան է մատնում մարդկալին իրաւունքը. նրանից օդտում են միայն ուժեղները, իսկ թուլերը ճնշում-ոչնչանում են:

Բայց այդ կոխւը կարելի է քիչ մեղմացնել— չափաւորել, եթէ երկրազործութիւնը կանոնաւոր հիմքի վրա դրուի, եթէ գործարանական արդիւնագործութիւնը ընկերակցական կազմակերպութիւն ստանայ:

Ներկայումս կան շատ ուժեղ ու մեծահոգի մարդիկ, որոնք ամեն կերպ աշխատում են իրականացնել հասարակական կեանքում ճշմարտութիւնն ու արդարութիւնը, վերացնել ճնշումն ու շահագործումը: Բայց միայն նիւթական ապահովութիւնը բաւական չէ մարդու համար. հարկաւոր է ձգտել գեպի բարձր ու վեհ գաղափարներ, որովհետեւ «միայն հացով չի ապրում մարդը»:

Պէտք է ձեռք բերել այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է կամ օգտակար է կեանքի խելացի կաղմակերպութեան համար:

Պէտք է մարդկանց հնարաւորութիւն տալ բոլոր պահանջներին բաւարարութիւն և կեանքից հանուք ստանալու:

Բայց քանի որ գեռ չենք հասել այդ յաղթանակին, քանի որ մեր շուրջը թափառում են անթիւ անհամար աղքատներ ու թշուառներ, քանի որ ատելութիւնն ու թշնամութիւնն է թագաւորում և մարդիկ վանդակում փակած գաղանների նման ատամներ են կրծտացնում իրար վրա,— ծիծաղելի է «հասարակութիւն» անուանել այդ բաղմանիւթ խառնուրդը, այդ հակառակ տարրերից բաղկացած ամբոխը:

Այդպիսի հասարակութեան մէջ միշտ ոտնատակ կլինի մարդկալին իրաւունքը, միշտ կշարունակուի անողոք կոխւ, այդ անվերջ ատելութիւնն ու թշնամութիւնը:

Մարդկութիւնն արդէն տիրապետել է բնութեան շատ ու շատ հարստութիւնները: Դրանցից ստացուող բարիքները աւելի քան բաւական են բոլոր մարդկանց աւզրուստն ապահովցնելու համար: Իսկ եթէ գոյութիւն չունենար մասնաւոր սեփականութիւն, եթէ բաղմաթիւ գործարանները, տները, կալուածներն ու դրամազլուխները առանձին անհատների ձեռքում չլինեին, այլ ընդհանրութեան, այն ժամանակ հնարաւոր կղառնար բաւականութիւն ու երջանկութիւն տալ բոլոր մարդկանց:

Այն ժամանակ մէնք կարող էինք գիտութեանը, գեղարուեստին և կանոնաւոր ու առողջապահիկ կենցաղավարութեանը նուիրել այն ոյժերը, որոնք ներկայումս գործադրուում են անօգուտ կոռւի, միմեանց ճնշելու և հալածելու համար:

Ասիայի և նոյն իսկ եւրոպայի մի քանի երկիրներում մարդիկ զիտեն, որ տեղական օրէնքներն անարդար են և խարուսիկ, որ գատաւորները հարուստների և ուժեղների հաճուքին են ծառայում, որ ազնիւ աշխատանքը շատ անդամ նոյն իսկ մի համեստ ապրուստ չի տալիս, որ ներկայ պայմաններում հայ ծեռք բերելու, յաղթող հանդիսանալու ամենալաւ միջոցներն են խարերայութիւնը, խարդախութիւնն ու հարստահարութիւնը:

Այս՝ զիտեն, բայց այնուամենայնիւ կեանքը շարունակում է իր ընթացքը և մարդիկ դարձեալ կուում են, դարձեալ ճնշում ու հալածում են միմեանց:

Այդ կոիւր կարող է վերանալ և տեղի տալ բարեկամութեան ու համերաշխութեան միայն այն ժամանակ, երբ այլ ևս չեն լինի հարուստներ ու աղքատներ, չափաղանց վալելքից յագեցածներ ու ծալրայեղ քաղցածներ, այլ կլինեն մարդիկ—հաւասար իրաւունքներով ու արտօնութիւններով:

Այդ ժամանակ սկըն ու համերաշխութիւնը կլինեն մեր դաւանանքը, մեր Աստուածը:

Միայն բարձր, աղնիւ մրցումը կարող է թարմացնել մեր կեանքը, մաքրել նրան այժմեան կեղտից, վերացնել ստոր հոգսերը փողի մասին—հողսեր, որոնք շատ անդամ դառնացնում են մեր օրերը և թունաւորում երշանկութիւնը:

Համերաշխութիւնը կարող է վերջ դնել տանշանքին և նրա տեղ տալ քաղցրութիւն ու հանովք:

Եթէ մենք միանանք իրեւ բարեկամներ և գործենք համերաշխ, այն ժամանակ կրկարողանանք կատարել շատ մեծ գործեր, շատ մեծ յաղթանակներ:

Խելացի և ազնիւ մրցումը աղնուացնում է մարդկանց, տալիս է որոշ օգուտաներ: Օրինակ, տեխնիկական գիւտերը փոխարինում են մէկը միւսին, կոիւ են մղում գոյութեան իրաւունքի համար և այդպիսով ձեափոխուում ու կատարելագործուում են: Այդ միւնոյնը նկատուում է գիտութեան ու տեխնիկայի բոլոր նիւղերում:

Այդպիսի ուժեղ մրցում աւելի պարզ, աւելի բեկեֆ ձեռվկատարուում է լուսաւորութեան արհեստական միջոցների վերաբերմամբ:

Այդտեղ դազր կուում է եկեքարականութեան դէմ, նաւթը—զաղի դէմ. իսկ խղճուկ մոմն էլ իր կողմից չանքեր է գործ զնում գոյութիւն պահպանելու համար:

Շատ բնորոշ է այդ կոիւր և նրա մէջ նկատելի է, թէ ինչպէս առաջաղիմութիւնը և գիտութեան շնորհիւ ծեռք բերած մի որևէ առաւելութիւն առաջ է մղում այդ միջոցներից մէկին կամ միւսին, իստ թողնելով միւսներին:

Բ

Ինչպէս յալտնի է, հին ժամանակներում մարդարածը մի կերպ քաշ էր տալիս իր կեանքը որորդութեան պատահական արդիւնքներով և մեռնելիս իր որդիներին ժառանգութիւն էր թողնում

ժայռի մէջ ընկած մի որշ-բնակարան, մի քանի կոպիտ ամանեղէններ և անհասկանալի ու դաժան բնութիւնը, որի դէմ հարկաւ որ էր շարունակ կռուել մի ողորմելի գոյութիւն պահպանելու համար:

Բայց երկար ու ծիգ գարերի ու հազարաւոր տարիների ընթացքում մարդիկ մաքրել են երկիրը, չորացրել են նահինները, կտրատել են անտառները, ճանապարհներ են գցել, շինել են հսկայական շէնքեր, հնարել են բազմաթիւ գործիքներ ու մեքենաներ և բաց են արել բնութեան շատ ու շատ գաղտնիքները, ուստի և այժմ քաղաքակիրթ երկրի զաւակը ժառանգում է իր նախորդներից ահազին հարստութիւն, պէս պէս ձեւերով:

Եւ այդ հարստութիւնը մարդկային աշխատանքի շնորհիւ շարունակ անում-մեծանում է:

Մաքրած երկիրն սպասում է, որ նրա մէջ սերմէր ցանեն և առատ հունձեր ստանան:

Հնարուած են երկրագործական կատարելագործուած մեքենաներ:

Իսկ ովոր ուզում է աւելի առատ հունձ ստանալ հողից, նա խելացի աշխատանք է գործ դնում, պարարտացնում է, մշակում է հողը իր ժամանակին և նպատակայարմար միշտներով:

Առաջ որսորդը հազարաւոր վերստեր պէտք է անցնէր իր ընտանիքին օրական ապրուստ հայթալթելու համար: Իսկ այժմ քաղաքակիրթ մարդը իր տանը, իր մօտ է պահում հարկաւոր կենդանիներին ու թռչուններին և աւելի քիչ տարածութիւն է անցնում, աւելի քիչ վտանգի է ենթարկում:

Կլիծան այլ ևս մարդու համար արգելք դառնալ չի կարող: Եթէ արեգակի տաքութիւնը քիչ է, մարդը արհեստական ձեռվ է տաքութիւն առաջցնում:

Եթէ հողի մի փոքրիկ կտորը ժամկենք ապակէ շրջանակներով և նրա միջից անցկացնենք տաք շրով լի չուզունէ խողովակներ, այն ժամանակ նրանից տասն անգամ աւելի արդիւնք կստանանք, բան թէ բաց օղի տակ թողնելով:

Կատարելագործուած մեքենաների շնորհիւ միայն մի քանի տասնեակ մարդիկ կարող են պատրաստել այնքան հազուստեղին, որ ամբողջ ստարիներ կբաւականացնէ հազարաւոր ընտանիքների:

Կարելի է լիշել ուրիշ բազմաթիւ օրինակներ, բայց այզքանն էլ բաւական է:

Դժբաղգաբար մեր հասարակական կազմակերպութիւնն այնպիսի պայմաններով է շրջապատուած, որ նախորդների աշխատանքի բազմազան արդիւնքներից օգտում է միայն չնչին փոքր ամասնութիւնը, իսկ մեծամասնութիւնը գարծեալ տանջում է, դարձեալ ճնշւում է:

Այն ինչ եթէ փոխենք այդ պայմանները, այն ժամանակ մարդկութիւնն իր երկաթէ և պողպատէ օգնականների շնորհիւ կկարողանար ապրել հանգիստ ու ապահով, կկարողանար վայելել շատ ու շատ բարիքներ:

Բայց այդ գեռ բոլորը չեն: Երկիրն էլ, արդիւնագործութիւնն էլ, զիտութիւնն էլ, տեխնիկան էլ—բոլորն էլ աւելի արդիւնաւէտ կդառնապին, եթէ

ընդհանուրի բարօրութեան համար գործադրուէին,  
եթէ բոլոր մարդկանց օգտին ժառայէին:

Յայտնի է, որ ամբողջ աշխարհում ամենահարուսար քաղաքակիրթ աղքերն են: Իսկ մեր շուրջը տիրում է աղքատութիւն, որ հայ ու մաշ է անում մարդկանց, որ բթացում է նրանցից շատերին:

Նոյն իսկ լաւ օրավարձ ունեցող բանւորը հաւատացած չէ, թէ վաղն էլ կարող է ապրուսի միջոց ունենալ, թէև նրա շուրջը անչափ հարստութիւն է զիդուած, թէև նրա առաջ դրուած են հզօր մեքենաներ, որոնք միայն մի քանի ժամուայ ընթացքում կարող են ահազին բարիքներ արտադրել:

Դա հակասութիւն է, կեանքի դառն հակասութիւն, որի վնասակարութիւնն ապացուցել են շատ գիտնականներ, գիտութեան անհերքելի փաստերով զինուած:

Այդ հակասութիւնն առաջ է եկել այն պատճառով, որ դեռ շատ հին ժամանակներից սկսած հարպիկ մարդիկ ամեն կերպ աշխատել են իրանց ծեռքը հաւաքել արդիւնադործութեան բոլոր միջոցները՝ հողը, հանքերը, մեքենաները և առհասարակ այն ամենը, ինչ որ հարկաւոր է արտադրող աշխատանքի համար:

Եւ այդ փոքրամասնութիւնը այդպիսի հզօր զէնքերով դիմուած շահագործել է և դեռ շահագործում է հասարակութեան մնացած մասին: Հարկաւ, ոչ ամենքը այդպիս են անում:

Դաժան շահագործում, որ կատարւում է յանուն ինչ որ իրաւունքների: Այս, այդ փոքրամաս-

ութիւնն աշխատում է համոզել, թէ նա աւանդական իրաւունք ունի այդպիս վարուելու, այդպիս շահագործելու ուրիշներին: Բայց ոյժի իրաւունքն է դա և ոչ արդարութեան:

Այդ հակասութիւնն առաջ է եկել այն պատճառով որ բանւորն ու դիւղացին արնում, քրտինք են խափում, իսկ նրանց աշխատանքի արդիւնքի ամենամեծ մասը հողատէրերն ու գործարանատէրերն են վայելում:

Ի՞նչ անել, չաշխատե՞լ.—բայց այդպիսի դէպքում բանւորն ու դիւղացին սովամահ կարող են լինել, որովհետեւ չունեն ապրուսի ուրիշ միջոցներ, որովհետեւ այդպիս են ներկայ հասարակական պայմանները:

Եւ այդ հանդամանքներից ամեն կերպ օգտուում է ցիշեալ փոքրամասնութիւնը, որը իր աշխատաւորներին արտադրել է տալիս ոչ թէ այն, ինչ որ հարկաւոր է, ինչ որ օգտակար է ընդհանուր բարօրութեան համար, այլ այն, ինչ որ ծեռնտու է իր մասնաւոր շահերին:

Ահա այդպիսով յաղթանակում է ոյժը, ճնշում ու տառապում է թուլն ու անօդնականը:

Մարդկութեանը հարկաւոր է կախը, հարկաւոր է մրցումը, բայց ոչ թէ դադանալին բնազդի վրա հիմնուած, այլ ազնութեան ու արդարութեան: Բայց ազնութեան և արդարութեան զէնքը գիտութիւնն ու լուսաւորութիւնն է գլխաւորապիս:

գ.

Հաղարաւոր խճուղիներ ու երկաթուղիներ ցանցի նման ծածկել են երկիրը, կտրատել են սարերն ու ձորերը։ Գետերը յարմարեցրած են նաւազնացութեան համար։ Տովերն ու ովկիանոսները մատչելի են դարձել։ շինուած են բազմաթիւ արհեստական նաւահանդիսաներ, որոնք ապաստարան են տալիս նաւերին։ ստորերկրեայ լայնարձակ լարիրինթները ցրուած են ամեն կողմ և քարածուխ ու ուրիշ հանքեր են մաստակարարում։

Հողի ամենափոքրիկ կտորն անդամ ցօղուած է մարդկային քրաինքով. իւրաքանչիւր ճանապարհ իր երկար պատմութիւնն ունի—հաղարաւոր ճորտերի դառն տանջանքների հետ կապուած պատմութիւն։

Երկաթուղու իւրաքանչիւր վերստր, ստորերկրեայ անցըի իւրաքանչիւր արշինը բաժին են ստացել մարդկային արիւնից։

Ուսումնասիրեցէք մի որևէ քաղաքի պատմութիւն և դուք կտեսնէք, թէ ինչպէս նրա քաղաքակրթութիւնն ու արդիւնագործութիւնը կամաց կամաց անել-զարդացել են բոլոր բնակիչների համաշխատակցութեան շնորհիւ։

Իւրաքանչիւր տան, իւրաքանչիւր գործարանի, խանութիւ արժէքը կախուած է մարդկային աշխատանքից։ Այդ աշխատանքն է նրանց ստեղծողն ու գին տուողը։ Երկրագնդի այդ փոքրիկ կէտերի վրա երկար տարիների ընթացքում աշխատել ու մեռել են ծիլիոնաւոր բանորներ և նրանց աշխա-

տանքը գեռ շարունակում են ժառանգները—նոր բանւորները։

Հարստութեան իւրաքանչիւր մասնիկը արժէք ունի այն չափով, ինչ չափով որ մարդկային աշխատանք է պարունակում իր մէջ, որովհետեւ աշխատանքն է արժէք ստեղծողը։

Միլիոնաւոր մարդկանց չանքերով է գոյութիւն ստացել այն քաղաքակրթութիւնը, որով մենք պարզենում ենք այժմ։ Ներկայումս էլ միլիոնաւոր մարդիկ աշխատում են նրա պահպանութեան ու զարգացման համար։

Սուանց զբան վաղուց անհետացած կլինէք այն ամենը, ինչ որ թանկ է, ինչ որ օգտակար է ամբողջ մարդկութեանը։

Նոյն իսկ մարդկային միտքն ու հանճարը մի հաւաքական արդիւնք են ներկայացնում—անցեալի և ներկայի արդիւնքը։

Երկար ու ծիգ գարերի ընթացքում հաղարաւոր հեղինակներ, բանաստեղծներ ու գիտնականներ աշխատել են, որպէս զի զիտութիւն ստեղծեն, տգիտութեան խաւարը փարատեն, որպէս զի առաջ բերեն չիտական մտքի այն մթնոլորտը, առանց որին անհնարին կլինէին մեր ժամանակի հրաշքներն ու շատ երկոյթները։

Իւրաքանչիւր նոր զիւտ անմիշական կապ ունի ամբողջ տեխնիկայի և գիտութեան հետ։ նա մի հետեւանք է նախորդ զիւտ տերի ու զիտական փորձերի։

Գիտութիւնն ու արդիւնագործութիւնը, գիտերն ու նրանց գործադրութիւնը, մտաւոր աշ-

խատանքն ու ֆիզիքական աշխատանքը, միաքն ու ոյժը—զրանք բոլորն էլ շաղկապուած են իրար հետ, կախում ունեն իրարից:

Իւրաքանչիւր զիւտ, առաջադիմական իւրաքանչիւր քայլ հաւաքական արդիւնք է թէ անցեալի և թէ ներկայի մտաւոր ու ֆիզիքական աշխատանքների:

Ուրեմն ի՞նչ իրաւունքով այս կամ այն անհատը կարող է սեփականացնել այդ ամբողջութեան մի որեւէ մասնիկը և ասել. «սա իմն է և ոչ մէկ ուրիշնոր»:

Բայց ամբողջ դարերի ընթացքում հասարակական պայմաններն այնպէս են դասաւորուել, որ մի խումբ մարդիկ իրանց սեփականութիւն են դարձրել այն ամենը, ինչ որ ամբողջ սերունդների աշխատանքի արդիւնքն է կազմում:

Այստեղ էլ կոիւն է գեր խաղայել, ոյժն է ներգործել: Դարձեալ կռիւ, դարձեալ ոյժ:

### Դ

Ներկայումս չնչին փոքրամասնութեան ձեռքում է գտնուում այն հողը, որի արժէքը օրէցօր բարձրանում է հասարակութեան աճող պահանջների շնորհիւ: Բայց հողատիրութեան այլպիսի պայմանները խանդարում են նրա կանոնաւոր մշակմանը:

Հանքային հարստութիւններն էլ գտնուում են սակաւաթիւ մարդկանց ձեռքում, որոնց գլխաւոր ձգտումն է կարելոյն չափ շատ շահ ստանալ, թէ-

չուղ զրա համար անշրաժեցա լինի զոհել արդիւնագործութեան զարգացումը:

Մեքենաներն էլ սակաւաթիւ «բաղդաւորների» սեփականութիւնն են կազմում, նրանց օգտին են ծառայում, թէև նրանց վրա հաղարաւոր բանորների քրտինք է թափուած, բաղմաթիւ դիտնական-ների չանքեր են զործադրուած:

Երկաթուղիները պատկանում են զանազան ակցիոններական ընկերութիւնների, որոնց անդամներից շատերը երեմն չեն էլ իմանում, թէ որաեղ են գրտնուում նրանք, թէ ինչպէս են հաւաքում այն խոշոր եկամուտները, որոնք իրանց մեծութեամբ միշնագարեան թագաւորների եկամուտների հետ կարող են համեմատուել:

Եւ եթէ մի գեղեցիկ օր հաւաքուեն այդ երկաթուղիների շինութեան վրա հալ ու մաշ եղած բանորների սոված ու մերկանդամ զաւակները, գնան յիշեալ բաժնետէրերի մօտ և հաց ու շոր պահանչեն, այն ժամանակ նրանց սրերով ու հրացաններով կցրուեն, որպէս զի պաշտպաննեն «ծեռք բերած իրաւունքները»..

Հապա ուր է արդարութիւնը, ուր է ճշմարտութիւնը:

Այստեղ էլ ուժեղն է լաղթում, ոյժն է գեր կատարում:

Ահա այդպիսի պայմանների շնորհիւ բանորի զաւակը կեանքի ասպարէզը մանելիս չի ունենում ոչ հող, որ կարողանայ մշակել, ոչ մերենայ, որով կարողանայ արգելութեանց առանց



ուրիշին տալու իր քրտինքի արդիւնքի ամենամեծ մասը:

Բայց չէ՞ որ նրա հայրն ու պապը աշխատել են այդ հողը ճահիճներից չորացնելու և մշակելու վրա, աշխատել են գործարանի շինութեան, մեքենաների կատարելագործութեան վրա: Այսո՛, աշխատել են իրանց ամբողջ կեանքում, իրանց ոյժի չափով, իսկ ո՞վ կարող է զրանից աւելին կատարել:

Այդպիսով բանւորը ստիպուած է համաձայնել այն բոլոր պայմաններին, որ առաջարկում է հողատերը կամ գործարանատերը, որովհետեւ նրան ապրուստ է հարկաւոր. իսկ զրանից լաւ պայմաններ նա ուրիշ ո՞չ մի տեղ չի կարող գտնել: Եւ դա անուանում են «կամաւոր համաձայնութիւն»...

Ամեն ինչ գարծել է սրա կամ նրա սեփականութիւնը. մնում է կամ քաղցից մեռնել կամ համաձայնել սեփականատիրոջ առաջարկութեանը:

Բայց այդ դեռ բոլորը չէ: Արդիւնագործութիւնը միշտ և ամեն տեղ ծգտում է աւելացնել ձեռնարկողի հարստութիւնը, աշխատում է կարելոյն չափ շատ օգուտ ստանալ: Իսկ հասարակութեան պահանջները, ընդհանրութեան շահերը նշանակութիւն չունեն նրա համար:

Դրա հետ կապուած են արդիւնագործութեան մշտական տատանումները, քրոնիկական կրիպտոները, որոնք իւրաքանչւր անդամ հարիւրաւոր ու հազարաւոր բանւորներ են փողոց շպրառում՝ անտուն ու անպաշտպան:

Աշխատաւոր դասակարգն այնքան քիչ փող է վաստակում, որ հնարաւորութիւն չունի սպառելու արդիւնագործութեան շատ ու շատ բարիքները: Այդ պատճառով արդիւնագործողները դիմում են արտասահմանեան վաճառանոցների օդնութեանը, աշխատում են գրաւել օտարահպատակ սպառողներ:

Բայց ամեն աեղ նրանք հանգիպում են հակառակորդների, մրցակիցների, որովհետեւ գրեթէ բոլոր երկիրներն ել զարգանում են միւնոն ուղղութեամբ, բոլորն ել աշխատում են իշխել հեռաւոր վաճառանոցներում:

Կոիւ վաճառանոցների համար:

Կոիւ արեւելքում գերիշխանութիւն ձեռք բերելու համար, կոիւ ծովերի վրա իշխելու համար. շանքեր՝ բարձր կամ ցածր մաքսերով հարեաններին ձնշելու, վաճառանոցներից գուրս մղելու համար: Կոիւ ամեն տեղ և ամենքի դէմ: Ահա այս է իրականութեան պատկերը:

Կրթութիւնը միայն սակա: աթիւ ընտրեալներին է մատչելի: Եւ միթէ կարելի է խօսել ընդհանուրի կրթութեան մասին, երբ բանւորի զաւակը դեռ 10—13 տարեկան հասակում ստիպուած է թողնել զպրոցը և գործարանը կամ հանքահորերը մանել: Երբ գիւղացու զաւակը շատ անդամ դեռ զպրոց չմասած՝ սալիքն ու ճիպոտին է մօտենում, որպէս զի իր հօրն օգնէ, չոր հաց ձեռք բերէ:

Միթէ կարելի է խօսել բանւորի կրթութեան մասին, երբ նա ամբողջ օրը արիւն-քրտինք է թա-

փում գործարանում և երեկոյեան առւն է վերա-  
դառնում չարդուած ու բեղարած:

Իրերի այդպիսի զրութիւնը ուղղակի խանդա-  
րում է հասարակական զգացմունքների զարգաց-  
մանը:

Մեզանից ամեն մէկը հասկանում է, որ առանց  
անկեղծ յարաբերութիւնների, առանց փոխարձ  
կարեկցութեան ու աշակցութեան, մարդկալին ցեղը  
կարող է ոչնչանալ ճիշտ այդպէս, ինչպէս որ կա-  
մաց կամաց ոչնչանում են գիշատիչ կեանք վարող  
և իրար հալածող կենդանիներից շատերը:

Այստեղ էլ հրապարակ է գալիս այն փաստը,  
որ գոյութիւն պահպանել կարող են միայն ուժեղ-  
ները, ճարպիկները: Նայեցէք, Անդիհան արդէն իր  
առաջնակարգ տեղը հետզհետէ դիշանում է գերմա-  
նիային—իր համեմատական թուլութեան պատճա-  
ռով:

Հարկաւոր է ճիշտ աչքի առաջ ունենալ, որ  
կուլտուրական յաղթանակ տանելու համար բաւա-  
կան չէ միայն արդիւնագործութիւնն ու վաճառա-  
կանութիւնը զարգացնել: Անհրաժեշտ է նաև ամ-  
րող հասարակութեան կուլտուրական ոլժը բարձ-  
րացնել:

Հասարակութիւնները, մասսաներն են իրար  
դէմ մաքառողները. ուստի և նրանցից յաղթող կա-  
րող է հանդիսանալ նա, որի կուլտուրական ոլժը  
մէծ է և կրթական մակերեսութը բարձր:

Հասարակական ներկայ պայմաններն անտա-  
նելի են: Հարկաւոր է նրանց հիմնովին փոփոխել:

Մենք աեսնում ենք, որ հարստութիւնը կենա-  
րոնացած է փոքրամասնութեան ձեռքում, իսկ այդ  
իրողութիւնը վնասակար ազդեցութիւն է անում  
ամբողջ հասարակական կազմի վրա:

Մարդկալին հասարակութիւնները, եթէ չեն  
ուզում կորստեան ենթարկուել, ինչպէս այդ պա-  
տահէլ է հին պետութիւններից շատերին, պէտք է  
օր առաջ վերակազմուեն:

Եւ իբրև հիմք այդ վերածնութեան, պէտք է  
ընդունուի ի հարկէ արդարութիւնը և հաւասա-  
րութիւնը, որպէս զի աշխարհի բարիքները ըստ կա-  
րելոյն ամենքին մատչելի լինեն:

Այդպիսի դէպքում հաւանականորէն այ ևս չի  
լինի կեանքի և մահուան այն գաժան կոիւր, որ այժմ  
թագաւորում է ամեն տեղ, որ թշուառացնում է  
շատ շատերին:

Այդ ժամանակ կինի միայն մաքուր ու խելա-  
ցի մրցում, որ ազնուացնում է մարդկանց:

Այս, ընդհանուրի սեփականութիւն պէտք է  
դառնայ աշխարհի ամբողջ հարստութիւնը, նայելով  
աշխատանքի քանակութեան:

Եթէ կինը կամ աղամարդը իր բաժինաշխատանքը  
մտցրել է այդհարստութեան մէջ, նա արդէն իրաւունք  
ունի օգտուելու նրանից. իրաւունք ունի իր բաժին  
բարիքն ստանալու: Իսկ այդ բաժինը բաւական է  
արդէն ամեն մէկին յագուրդ տալու:

Այս, իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի  
կեանքից բաւականութիւն ստանալու, նրա բարիք-  
ները վայելելու:

Ե

Մեր նախսրդները շատ շանքեր են դործ զրել  
որպէս զի մարդկալին աշխատանքը աւելի արդիւ-  
նաւէտ դառնայ: Եւ այդ շանքերն ունեցել են ակ-  
ներև հետեւանքներ:

Օրինակ թէւ ֆրանսիայում աղբարնակութիւնն  
աւելի դանդաղ է աճում, քան թէ Անգլիայում ու  
Գերմանիայում, բայց այնուամենայնիւ այլտեղ էլ  
արտադրող ոչժերը զարդանում են մեծ արագու-  
թեամբ:

Թէւ այլտեղ երկրադործութիւնը ենթար-  
կուել է կրիզիսների և ուրիշ ծանր պայմանների,  
բայց և այնպէս վերջին քսանչինդ տարիների ըն-  
թացքում չորս անգամ աւելի ցորեն է ստացուել,  
քան թէ առաջ իսկ գործարանական ապրանքների  
արտադրութիւնը տասն անգամ աւելացել է:

Ամերիկայի Միացեալ Նահանգներում աւելի մեծ  
ու զարմանալի է այդ առաջադիմութիւնը: Այդտեղ  
արդիւնագործութիւնն այնքան զարգացել է, որ ար-  
տադրում է մի քանի տասնեակ անգամ աւելի աս-  
րանք, քան թէ առաջ:

Բայց մարդիկ կարող են դրանից էլ աւելի  
առաջադիմել, աւելի մեծ քայլեր անել, եթէ հաստ-  
րակական պայմաններն ուրիշ լինեն:

Այժմ ոքքան զարգանում է արդիւնագործու-  
թիւնը, նոյնքան աճում է միջնորդների — ձրիակեր-  
ների, բանակը կամ ուրիշ խօսքով ասած՝ բազմանում  
են ուրիշների աշխատանքով ապրող մարդիկ:

Վիճակադրութիւնը ցոյց է տալիս, որ ֆրան-  
սիայում իւրաքանչիւր երեսում բնակչին հազիւ տա-  
սը արդիւնագործող է գալիս: Երկրադործական ամ-  
բողջ հարստութիւնը միայն եօթը միլիոն մարդկանց  
աշխատանքի արդիւնքն է կազմում: Հանքագործու-  
թեամբ և շորերի արդիւնագործութեամբ պարա-  
պում են ոչ աւելի քան երկու միլիոն հոգի:

Դրանից արդէն կարելի է եղրակացնել, թէ ո՞ր-  
քան բազմաթիւ են աշխատաւոր գասակարգին շա-  
հագործողները:

Ճիշտ աղբիւրներից յայտնի է, որ Անգլիայում  
ամենաշատը վեց կամ եօթը միլիոն բանուրներ են  
ստեղծում այն բոլոր հարստութիւնը, որ անգլիա-  
ցիները ուղարկում են աշխարհի բոլոր ծայրերը:

Հասկանալի է ուրեմն թէ վեռ ո՞րքան մարդիկ  
են մնում, որոնք ապրում են իրանց կապիտալի եկա-  
մուտներով. թէ ո՞րքամ բազմաթիւ են միշնորդի  
գեր կատարողները — վաճառականները, որոնք մի տե-  
սակ հարկ են վերցնում ամբողջ աշխարհից, շատ  
անգամ իսկականից տասը-քսան անգամ աւելի զին  
ստանալով ապրանքների համար:

Պատահում են դէպքեր, երբ գործարանատէրերը  
զիտմամբ սահմանափակում են արդիւնագործու-  
թիւնը, որպէս զի այդպիսի արհեստական միջոցով  
բարձրացնեն ապրանքների գները:

Հաղարաւոր չուլհակներ շաբաթը երեք օրից  
աւել չեն կարողանում աշխատել իրանց մեքենաների  
վրա, որովհետեւ նրանց տէրերն ուղում են բարձր  
գները պահպանել:

Պարապ են մնում զբանք, իսկ Եւրոպայի աղդաբնակութեան զրեթէ երեք բառորդը զուրկ է կանոնաւոր հագուստից:

Եւ չափազանց բազմաթիւ են այդպիսի օրինակները:

Ո՞րքան մարդկային ոյժ է կորչում իզուրտեղը—ոյժ, որ կարող էր ծառայել անհրաժեշտ առորդականեր պատրաստելու համար:

Բաւական է լիշել այն միջիարդները, որ Եւրոպան ծախսում է սպառազինուելու համար, որպէս զի կարողանայ նորանոր վաճառանոցներ ձեռք բերել կամ հարեաններին իր անտեսական աղդեցութեան ենթարկել:

Վերջապէս միթէ քիչ փող են ծախսում կաշառակեր մամուլի միջոցով վնասակար գաղափարներ տարածելու, այս կամ այն կուսակցութեան, այս կամ այն անհատի շահերը պաշտպանելու համար:

Քիչ փող է ծախսում այս կամ այն հարուստի տան, գոմի, ժառաների և շների վրա:

Քիչ փող է ծախսում աշխարհային տիկինների քմահաճոյքների կամ առհասարակ փչացած բարձր հասարակութեան փարթամ կեանքի համար:

Այդ ձանապարհով մախսած գումարներն ու աշխատանքը բաւական կլինէին օգտակար առարկաների քանակութիւնը կրկնապատկելու—առարկաներ, որոնց կարեորութիւնն այնքան զգալի է աղդաբնակութեան մեծամասնութեան համար:

Ուրեմն ցնորք չէ ընդհանուր բաւականութիւն ստեղծելը:

Գուցէ դա ցնորք էր այն ժամանակ, երբ Երկրագործը ամենածանր աշխատանքով հաղիւ կարողանում էր մի դեսեատին հողից քսան փութ հաճար ստանալ, երբ նա ծեռքով էր պատրաստում դրա համար հարկաւոր գործիքները:

Ո՞չ, այժմ այլևս ցնորք չէ դա, քանի որ գոյսթիւն ունեն ելեքտրականութիւնն ու շոգին, քանի որ գործում են դրանց լարմարեցրած մերենաները:

Բայց որպէսզի այդ ընդհանուր բաւականութիւնը իրականութիւն դառնայ, անհրաժեշտ է աշխարհի ամբողջ հարստութիւնը—բաղաքներ ու գիւղեր, մշակած դաշտեր ու այդիներ, գործարաններ ու ձանապարհներ—ամեն ինչ ընդհանուր սեփականութիւն դարձնել:

Դժբաղդաբար այդ հարցը չի կարող իր բաւարար լուծումն ստանալ սովորական խաղաղ ձանապարհով—օրէնսդրութեամբ:

Ոչ ոք այդպիսի լուծում չի էլ սպասում —ոչ աղքատը և ոչ հարուստը:

Այստեղ արդէն հարկաւոր է այսպէս ասած՝ «մեծ ու սարսափելի կոիւ»—հարցը անուան մէջ չէ—որը կարող է իրականացնել վերոնշեալը:

Այդպէս ուրեմն, մարդկային երշանկութեան համար ոյժի օգնութեանը պէտք է զիմել:

Այն ժամանակ կարելի է ասել, թէ իւրաքանչիւր անհատ ուժեղ թէ անուժ, ընդունակ թէ անլուկունակ, ամենից առաջ «իրաւունք ունի ապ-

ըելու» և բաւականութիւն ստանալու, այսինքն  
իրաւունք ունի մարդավայել կեանք վարելու:  
Մէկը բոլորի համար, բոլորը մէկի համար...

Զ

Բնական իրաւունքը իր ապագայ զարդացման  
համար նշանաբան պէտք է ընարե այս—

«Մէկը բոլորի համար, բոլորը մէկի համար»:  
Շատ յաճախ իրաւունքը չի համապատասխա-  
նում իրականութեանը:

Օրինակ. ամենքին յայտնի է այն ճշմարտու-  
թիւնը, թէ բոլոր մարդիկ աղատ են ծնւում—  
ճշմարտութիւն, որի մասին Սոկրատն էլ է զրել:

Դրանից կարելի է եղրակացնել, թէ բոլոր  
մարդիկ իբրև բանական արարածներ աղատութիւն  
պէտք է վայելեն ամեն բանի մէջ—խօսրի աղա-  
տութիւն, դրչի աղատութիւն, խղճի ու գործու-  
նէութեան աղատութիւն:

Սակայն իրականութեան մէջ չկայ ալդպիսի  
բան:

Շատերի կարծիքով իրաւունքը այն կանոնների  
գումարն է, որ պահպանում է անհամաների ու ամ-  
բողջ խմբերի շահերը:

Եւ մեղանում բաւական շատ են ալդպիսի  
խմբերը, որոնց համոզմունքը երեմն անձնական  
շահերի հետ է կապուած:

Հէնց այդ պատճառով հարկաւոր է միշտ և  
ամեն տեղ կրկնել բարձրածացն.

— «Բարձր և անբիծ պահեցէք իրաւունքի դրօ-  
շակը. բարձր, երբ նա կուում է շահի և ոչժի  
քակքայուող զաղափարի դէմ, երբ մաքառում է  
խմբերի ու կուսակցութիւնների ստոր հակումների  
դէմ:»

Միշտ յիշեցէք, որ արդարութիւնը պէտք  
է լինի իրաւունքի հիմքն ու նպատակը:»

Այո՛, ալդպիսի իրաւունք պէտք է բարողել և  
գործադրել միշտ և ամեն տեղ:

Որքան բարձր լինի մի ժողովրդի կուլտուրական  
մակերեսովթը, նոյնքան բարձր կլինի և նրա ստեղծա-  
գործող ոլքը՝ հիմնուած իրաւունքի իդէալների վրա:

Որքան բարձր է արեգակը երկրից, նոյնքան  
պայման է նրա լոյսը:

Մարդկային իդէալը որքան բարձր է իրակա-  
նութիւնից, նոյնքան զօրեղ կլինի նրա ստեղծագոր-  
ծող ոլքը:

Բայց միւս կողմից պէտք է խոստովանել, որ  
կոիւն է ստեղծում իրաւունք—մշտական կոիւր, որ  
մղւում է նիւթական բարիքների համար, նիւթա-  
կան միջոցներով՝ ոլժուի:

Այդ կուում յաղթում է ուժեղը: Նա է հաշ-  
տութեան պայմաններ թելալրում յաղթուածին:

Պարզ է, որ այդ պայմանները արտօնութիւն-  
ներ են տալու ուժեղին և ձնշման ու զրկանքների  
աղբիւր են գառնալու թուլի, յաղթուածի համար:

Բայց չէ՞ որ իրաւունքը ներքին-հոգեբանական  
երեսոյթ է, որ ներկայացնում է մարդու մտապատ-  
կերը այն բանի մասին, ինչ որ «պէտք է» լինի:

Սակայն այդ խօսքերի մէջ չկայ ոյժ, զէնք,  
չկայ բարբարոս Գալլի նշանաբանը, թէ «իմ որի  
ծալրին է իմ իրաւունքը», թէ «վա՞յ յաղթուած-  
ներին»:

Մեզ հարկաւոր է, այսպէս ասած՝ ոչ թէ «շա-  
հերի պաշտպանութիւն», այլ «արդարութեան իրա-  
կանացումն»: Հէնց դրա մէջն է իրաւունքի ամբողջ  
էութիւնն ու նպատակը:

Թերևս միայն արդպիսի իրաւունքն էր, որ  
ոչնչացրեց սարկութիւնն ու նորտութիւնը և շատ  
տեղերում ստեղծեց խօսքի ու խղճի ազատութիւնն:

Եւ դեռ ո՞րքամ դորժ ունի կատարելու այդ  
արդար իրաւունքը:

Սոյիալական առաջադիմութեան «նախադուռը»  
միշտ իդէալիզմն է, որովհետեւ իդէալիզմը կարող է  
ներշնչել անձնազոհութիւն ու հերոսութիւն. միայն  
նա կարող է մտածել և իրականացնել մեծ դործեր:

Խելացի օրէնսդրութիւնը պէտք է աշխատի ոչ  
թէ վերացնել գոյութեան կոփը, այլ կանոնաւորել  
նրան, որպէսզի կամաց կամաց աւելի լայն շրջաննե-  
րում տարածուեն նշմարիտ ֆիզիկական, մտաւոր  
ու բարոյական բարեմասնութիւնները և դրանք  
լինեն գոյութեան կոռուփ զէնքերը:

Պէտք է աշխատել, որ յաղթողը լարդէ, սիրէ  
ու մխիթարէ իր յաղթուած եղբօրը. օգնէ նրան  
թերութիւններն ուղղելու և մարդավայել անհատա-  
կան կեանք վարելու:

Շատ նշանաւոր մարդիկ պնդում են, որ իրա-  
ւունք պահպանելու համար ամենալաւ ապահովու-

թիւնը անհատական իրաւունքի ազատութիւնն է  
և այդ ազատութիւնը պաշտպանող հասարակական  
զիտակյութիւնը:

Եթէ իրաւունքի զգացմունքը մի անյաղթելի  
ոյժ է դարձել, այն ժամանակ նա կարող է ապա-  
հով համարուել զանազան ոտնձգութիւններից և  
սպառնալիքներից:

Եթէ մի ժողովուրդ իրաւունքի մէջն է տես-  
նում իր գոյութեան անհրաժեշտ պայմանը և մա-  
հացու վիրաւորանք է համարում նրա խանդարումը,  
այն ժամանակ նա կարող է մինչև վերջը պաշտպա-  
նել այդ իրաւունքը:

Այդանունը իրաւունքն ու բարոյականութիւնը  
սանձահարում են մարդկային կրքերի կամայականու-  
թիւնը, խաղաղութիւն ու կարգապահութիւն են  
մացնում մարդկանց յարաբերութիւնների մէջ և  
սանձահարում են անհատական շահասիրութիւնն ու  
եսականութիւնը, առաջ մղելով հասարակական  
շահերն ու արդարութեան պահանջները:

Այդ երկու գործօնները ձեռք ձեռքի տուած  
պնդացնում են հասարակական կազմի հիմքը, այ-  
սինքն ներդաշնակում են մասնաւոր շահերն ու  
ձգտումները և այդպիսով ստեղծում մի հասարա-  
կական ամբողջութիւն:

Շատ անդամ իրաւունքը որոշ ազատութիւն  
է տալիս անհատական շահերին ու ձգտումներին  
և նրանց դարձնում նեղ ու եսական:

Խոկ բարոյականութիւնը, ընդհակառակը, տւե-  
լի մեղմացնում է այդ ձգտումները, առաջ է մղում

մարդասիրական պահանջները և ազգպիսով պաշտպան հանդիսանում ընդհանրութեան շահերին ու ծգտումներին:

է

Ներկայումս մարդկութեան զիխաւոր պահանջներից մէկը բարոյական վերածնութիւնն է: Եւ ահա տեղ-տեղ մենք տեսնում ենք, որ աղգերի թշուառութիւնը, մարդկութեան բարիքները, աշխատաւոր դասակարգի իրաւունքները դարձել են կեանքի կենտրոնակէտ և ոգեսրում, առաջ են մղում գաղափարի դինորներին:

Բայց ժամանակակից դործիչը այլ կերպ պէտք է հասկանալ այդ կոիւր, այլ զէնքեր պէտք է ընտրէ նրան համար: Նրան զեկավարողը միայն ժողովրդին ժառայելու ցանկութիւնը չպէտք է լինի: Ո՞չ:

Նա, այդ ճանապարհի վրայ կանդնելով, պէտք է զարկ տայ իր բարոյական դիմակցութեանը, պէտք է միշտ լիշէ, որ իր փայտայած տենչանքները բաւարարութիւն ստանալ կարող են միայն այն զէպքում, եթէ իր իդէալի հետ կապուած հասարակական բարձր ձեւերն իրականանան և ընդհանուրի սեփականութիւն դառնան:

Միայն այդ գէպքումնրա անհատականութիւնը բարձր արժէք կստանալ—արժէք, որի համար էլ նա կոիւր էր սկսել:

Ժամանակակից գաղափարական հոսանքը աչքի է ընկնում նրանով, որ զիխաւոր տեղը տալիս է

«հասարակական շահերին», հաստատ հաւատացած լինելով, որ առանց դրան անհնարին է անհատական ազատութիւնն ու առաջադիմութիւնը:

Սոցիալիզմի կամ ուրիշ խօսքով ասած՝ հասարակական համաշխատակցութեան համար մղած կոիւր միենոյն ժամանակ պաշտպանում է և մարդասիրական ձգտումները, որոց սանկցիա է ստանում այդ ձգտումների կողմից:

Պարզ է, որ այգակիսի պայմաններում մարդիկ չեն կարող անտարբեր կերպով դիտել շրջապատող կեանքը, պէս-պէս բռնութիւններն ու ձնշումները:

Ընդհակառակը. նրանք կոիւր են սկսում յանուն արդարութեան ու ձշմարտութեան, յանուն անհատի ու ամբողջ մարդկութեան իրաւունքների:

Դա կոիւր է յանուն մարդկային բնական իրաւունքի:

Եւ իսկական մարդը ո՛չ մի բարիքի, ո՛չ մի բաղդաւորութեան, հանգստութեան, փառքի կամ մեծ մարդկանց գովասանութեան հետ չպէտք է փոխէ այդ սրբազն իրաւունքը:

Իւրաքանչիւր անհատ պարտաւոր է ապահովութիւն ու ազատութիւն պահանջել՝ իր մարդկային իրաւունքի համար, որովհետեւ միայն այգակիսի պայմաններում նրա հոգեկան ձգտումները կարող են զարգանալ ու բաւարարութիւն ստանալ:

Իսկ այդ բոլորի համար անհրաժեշտ է ամուր հիմքի վրա գնել յարգանք գէպի մարդը և դրա հետ կապել անհատական ազատութիւնը:

Ահա գա՛ պէտք է լինի այժմեան գաղափա-

բական շարժման նշանաբանը, որպէսզի աւելի պարզ ձեռվ աչքի ընկնեն այն կեղծ իդէալիստները, որոնք գաղափարի գրօշակի տակ թաղնուած՝ ամեն կերպ աշխատում են արծարծել ստոր մտքեր ու ցանկութիւններ, ծգուում են պահպանել հինք և խաղաղ սրտով երկրպագել նրա առաջ:

Այո՛, այդպիսի պայմաններ են հարկաւոր մարդկային իրաւունքի զարգացման համար: Դա ժամանակի հասունացած պահանջ է, որ կարող է զարթեցնել մեր խիզճը և ստիպել նրան գործելու յանուն հշմարտութեան ու բարութեան:

Ը

Այդպիսի իդէալները—հշմարտութիւն և բարութիւն—ամենաբարձր, ամենաթանկազին բաներն են աշխարհիս վրա:

Դժբախտաբար մենք աւելի շատ խօսում ենք, քան թէ գործում և հէնց գրանով էլ արաստաւորում լաւն ու բարին: Իսկ չէ՞ որ խօսքը կենդանի գործի նշանացոյցը պէտք է լինի: Աւելի լաւ. է մի փոքրիկ գործ, քան թէ հարիւրաւոր խօսքեր:

Ուշի ուշով քննելով բարութեան ու հշմարտութեան հիմունքները, մենք կարող ենք ասել.

—Բարութիւնը՝ հշմարտութիւն է և արդարութիւն և ընդհակառակը. հշմարտութիւնը բարութիւն է:

Մեղանից իւրաքանչիւրը կխսանվանի, որ հշմարտութիւնն ու բարութիւնը դնահատելիս չի

սխալում այն պատճառով, որ նրա սրտում հնչում է խղճի ծայնը:

Կեանքում ամենադժուարն այն է, որ մարդկարողանայ կապել խօսքը գործի հետ:

Իդէալը երեակալութեամբ չի սաեղջում, այլ մեր բոլոր ոչմերի զրդմամբ, այսինքն երբ մեր խելքն ընդունում է հշմարտութիւնը, սիրան զգում է, իսկ կամքն աշխատում է իրականացնել:

Զկայ հոգեկան կեանք առանց իդէալի:

Ով որ չի ուզում իմանալ բարութիւնն ու հշմարտութիւնը, նա չի ապրում հոգեպէս. նա զրանով մի կողմ է շպրտում այն ամենը, ինչ որ թանկ է և պէտքական:

Ստորութիւնն, դատարկութիւն...

Բայց չէ՞ որ կեանքից գանգատուել, ասել որ նա դատարի ու ստոր է—կնշանակէ խոստովանել սեփական անզօրութիւնը և իդէալի բացակայութիւնը:

Այո՛, ով չունի իդէալ, նա չունի և կեանքի բաւականութիւն:

Ամեն ինչ կախուած է կեանքի մասին ունեցած մեր հայեցակէտից, այսինքն նրանից, թէ մենք ինչպէս ենք նայում կեանքի երկութների վրա՝ ու՞ ակնոցներով, թէ վարդագոյն:

Մնզոյն աշխարհահայեցողութիւն չկայ: Մեր ամբողջ կեանքը մեղանից է կախուած:

Միջնադարեան ասպետների մի ընկերութիւն հետեւալ նշանաբանն էր ընտրել.

—Իմ խելքն ու ոչմը՝ ժողովրդին, իմ անրիծ

սիրար՝ կեանքիս ապագայ ընկերունուն, իսկ իմ  
ազատ ողին՝ ինձ:

Այս, մենք կեանքի տէրն ենք: Նա մեղանից է  
կախուած, մեղ է ենթարկուում:

Իհարկէ աշխարհում կայ հիւանդութիւն, կայ  
դժբաղութիւն, բայց զրանց ազդեցութիւնը րո-  
լորովին այլ կերպ է լինում, երբ մենք աշխատում  
ենք բարձր կանգնել նրանցից, յաղթել նրանց:

Այդ կռւում շատ մեծ դեր է խաղում «ողին»:  
Կոիւն անհնարին է, երբ նա երկրորդական տեղ է  
բռնուում:

Այդ բոլորից երեսում է, թէ որքան շատ աշ-  
խատանք է հարկաւոր—աշխատանք իւրաքանչիւր  
անհատի կողմից: Եւ որքան ճանը է այդ աշխա-  
տանքը, նոյնքան էլ հեշտ է երեակայելը, ցնորքներ  
կազմելը:

Բայց երեակայութեամբ երբէք չի կարելի  
կեանքը փոխել, մեր բարոյականութեանը այլ կեր-  
պարանք տալ: Երեակայութիւնը միշտ հեռու է  
իրականութիւնից: Զէ՞ որ երեակայել՝ նշանակում է  
ցանկանալ այն, ինչ որ չկայ:

Կեանքի մէջ ամենաթանկաղին բանը սէրն է,  
սիրուց բարձր ոչինչ չկայ:

Ով որ սիրում է բարութիւնն ու ճշմարտու-  
թիւնը, նա չէ կարող չփրել մարդկանց:

Աշխարհիս ամենալաւ իդէալն այն է, երբ նա  
երեակայութեան արդիւնք չէ, այլ իրական կեան-  
քի հետ է կապուած: Այդ իդէալը տանջանք է պատ-  
ճառում, բայց միենոլն ժամանակ ոյժ է ներշըն-

չում կոռելու համար: Իսկ արդպիսի կոիւր կարող  
է ազնուացնել թէ առանձին անհատներին և թէ  
ամբողջ մարդկութեանը:

Միայն նա կարող է բարելաւել կեանքը, զարկ  
տալ մարդկալին առաջազիմութեանը: Միայն նա  
կարող է պարզել, թէ ի՞նչ է լինելու մարդկալին  
կեանքի նայատակը, թէ ի՞նչպէս պէտք է մարդը  
ծղաի ամբողջ բնութեան տէրը—թագաւորը դառ-  
նալու, ի՞նչպէս պէտք է զարգացնէ իր հոգեկան  
ոլմերը, որոնցից կախուած է մարդկալին էու-  
թիւնը:

Մարդկութիւնը կարող է սահնալ այդ բոլորը  
միայն աանչանքների գնով, կամ ինչպէս մի փիլի-  
սոփայ է ասում, տանչանքների դպրոցում:

Հարկաւոր է լինել պինդ ու հաստատակամ և  
ոչ թէ թույ ու զիջանող:

Այդ գէպըում ամբողջ մարդկալին ցեղը կդաւ-  
նայ աւելի զօրեղ, ամբողջ հասարակութիւնը կլինի  
աւելի բարձր ու ազնիւ, որովհետեւ միայն ամենա-  
աղնիւն է պինդ ու հաստատուն:

Թ

Անհրահեշտ է առողջապահութեան դիտու-  
թիւն, անհրաժեշտ է առողջութիւն:

Առողջապահութիւնն աշխատում է պնդացնել  
ու պահպանել առողջութիւնը: Նա ցոյց է տալիս  
այն պայմաններն ու հանդամանքները, որոնք նպաս-

տաւոր են մարդկագին աշխատանքի համար, որոնք օգտակար են նրա զարգացմանը:

Աւելի լայն մաքով վեր առաջ՝ առողջապահական գիտութիւնը ուսումնասիրում է այն բոլոր պայմանները, որոնք աղջում են նոր տեսակներ առաջացնելու վրա, որոնք մեծ դեր են խաղում թէ առանձին անհատների և թէ ամբողջ աղջերի զարգացման կամ ոչնչացման գործում:

Ուսումնասիրել այն բոլոր պայմանները, որոնցից առաջ են դալիս հիւանդութիւն, մահ, ախտ կամ ոճրագործութիւն—ահա սա է առողջապահական գիտութեան նպատակը:

Դրանք այնպիսի հարցեր են, որ կապ ունեն թէ առանձին անհատների և թէ ամբողջ հասարակութեան կեանքի հետ:

Անհատների ոյժից ու առողջութիւնից է կախուած ամբողջ ժողովրդի առողջութիւնը, ամբողջ երկրի բարօրութիւնը:

Ամեն մի անհատի և ազգի նպատակն է կարելոյն չափ երկար և լաւ ապրել:

Ժողովրդի առողջութիւնն ու բարօրութիւնը սերտ կապով կապուած նն իրար հետ:

Ամեն մի երկրի հարստութիւնը կախուած է ոչ թէ հաւաքական կապիտալներից, այլ նրա զաւակների ոյժից, առողջութիւնից ու դորձելու ընդունակութիւնից:

Այս, առանձին անհատների առողջութիւնը նրանց հայրենիքի հարստութիւնն է կազմում:

Իւրաքանչիւր ազգ, եթէ ուզում է մեծ, հզօր

ու հարուստ լինել, պէտք է հոգ տանի, որ իր ժառանգները ուժեղ ու առողջակաղմ լինին:

Թոյլ, հիւանդու սերունդը չէ դիմանայ գոյութեան կուռում:

Դժբաղդաբար գեռ շատերը խնայում են փող ծախսել առողջապահութեան համար. դրանք չեն ուղում հասկանալ, որ այդ ծախսերը չեն կորչի, այլ իբրև մի հաստատուն կապիտալ՝ կտան խոչը արդիւնքներ:

Այս, մենք դեռ կեանքից ու առողջութիւնից բարձր ենք դասում փողը, մոռանալով, որ առողջութիւնն է միլիոնների աղբիւրը:

Առողջապահութեան վրայ ծախսած գումարները եռապատիկ արդիւնք կրեն, բաղմաթիւ մարդկացին զոհեր ազատելով վաղաժամ մահից:

Ժողովրդի առողջութեան սեղանի վրա բերւած նիւթական զոհը շատ չնչին է իր պատճառած բարիքների համեմատութեամբ:

Մարդկանց ֆիզիքական առողջութեան հետ սերտ կապով կապուած է բարօյական և մտաւոր զարգացումը:

Բարեկաւելով աշխատաւոր դասակարգի առողջապահական պայմանները, մենք կնպաստենք նրա բարոյական և մտաւոր առաջադիմութեանը: Բարեկրը կմեղմանան, նախապաշարմունքն ու դռեհեկութիւնը կթեթեանան:

Մեր թշուառ ժողովուրդը, մեր աշխատաւորները այնպէս են սովորել կեղտուա ու չարքաշ ապ-

րուստին, որ չեն կարող և չեն էլ մտածում շըր-  
ջապատող պայմանները փոխելու մասին:

Իսկ այդպիսի պայմաններում աշխատառոր  
դասակարգի բարոյական մակերեսովթը ոչ թէ բար-  
ձրանում է, այլ ընկնում է:

Միայն առողջապահական պայմանները բարե-  
լաւելով կարող ենք բարձրացնել նրա բարոյակա-  
նութիւնը: Այդ դէպօւմ բանորը աւելի զերա-  
դաս կհամարէ ծգտել դէպի մաքուր ու աղնիւ-  
դուարհալիքները, քան թէ թափառել զինետներում  
և անբարոյականութեան որչերում:

Բանւոր դասակարգի առողջապահական պայ-  
մանները բարելաւելու պարտականութիւնն ընկնում  
է ոչ միտին նրանց տէրերի, այլ և ամբողջ հասա-  
րակութեան ու պետութեան վրա:

Հասարակական առողջապահութեան պահանջ-  
ները կատարելը օգտակար է և անհրաժեշտ:

Ուրեմն թող հասարակութեան իւրաքանչիւր  
անդամ իր վրա վերցնէ որոշ պարտականութիւն  
ու զոհաբերութիւն:

Առողջապահական օրէնսդրութեան գլխաւոր  
սկզբունքը այն պէտք է լինի, որ իւրաքանչիւր  
անհատ իրաւունք ունենայ պաշատանել իր առող-  
ջութիւնը, ապատութիւնը և սեփականութիւնը,  
միենան ժամանակ առանց մի որևէ վնաս հաս-  
ցնելու հասարակութեան միւս անդամներին:

Առողջապահութեան կանոնները սուրբ ու պար-  
տաւորական պէտք է լինեն բոլորի համար:

Ով որ չի հպատակում այդ կանոններին, նա

վնաս է հասցնում թէ իրան և թէ շրջապատող  
հասարակութեանը:

Առողջապահութեան ամենագլխաւոր պահանջն  
այն է, որ մարմնի իւրաքանչիւր անդամը համա-  
պատասխան սնունդ ստանայ, համապատասխան  
գործողութիւն կատարէ և չափաւոր ու ներգաշ-  
նակ վարժութիւններով աւելի զարգանայ—կատա-  
րելագործուի:

Բարելաւել սնունդը, ապրել մաքուր օդում,  
ախտահանութեան ենթարկել գիւղերն ու քաղաք-  
ները—ահա մի շարք հրատապ հարցեր, որոնց մա-  
սին եռանդուն կերպով աշխատում է առողջապա-  
հութիւնը:

Ժամանակակից բժշկութիւնը ամեն կերպ աշ-  
խատում է մարդկային օրգանիզմն այնպիսի պայ-  
մաններով շրջապատելի որ ոչ մի հիւանդութիւն  
չկարողանայ զարգանալ:

Աւելի հեշտ է զգուշանալ հիւանդութիւնից,  
քան թէ բժշկուել: Ուրեմն ամենամեծ խնամքը  
պէտք է զորժապրել առողջութիւնը պահպանելու  
համար:

Մարդու առողջութիւնն իր ձեռքումն է. միայն  
հարկաւոր է հետեւել առողջապահութեան խոր-  
հուրդներին \*):

Մեր ագիտութիւնն է մեղաւոր, որ հիւանդու-  
թիւնները տարածւում են:

\*.) Տես իմ «Առողջապահական զրոյցներ», «Մեր  
նեարդերը» և «Խոչ է անառակութիւնը» գրքոյները:

Մենք մեր առողջութեան մասին հոգ տանել  
ենք սկսում միայն այն ժամանակ, երբ արդէն նա  
քայլայուած է, երբ հիւանդութիւնն արդէն բուն  
է զրել մեր օրդանիզմի մէջ:

Հապա ուր է ոյժը, ուր է հաստատակամու-  
թիւնը:

Ճ

Այժմ տեսնենք, թէ բնութեան մէջ ինչպէս է  
կատարում զոլութեան կոփւր, որ այնպէս զեղե-  
ցիկ կերպով բացատրել է անզիւցի դիւնական  
Զարլղ Դարվինը—զեռ լիսուն տարի առաջ:

Թէ Դարվինն իր կողմնակիցներով և թէ նրա  
հակառակորդները շատ են նպաստել անմահացնելու  
բնութեան մէջ կատարող այդ կոռու զաղափարը:

Իսկ կենդանի զաղափարը միշտ զարգանում է,  
միշտ առաջադիմում է: Դա է նրա կեանքը: Այդ  
զարգացումը կատարում է զիտնականների ձեռքով:

Ահա զրանցից մի քանիսի անունները. Ուոլլէս,  
Մորից, Վադներ, Նեգլի, Մալլորա, Էլմեր, Գիպ,  
Էմերի, Դաւիդսոն, Մարկս, Էնգելս, Բերնշտայն,  
Լանգէ, Շեֆլէ և այլն:

Իսկ Դարվինից առաջ՝ Բէկոն, Լալլից, Բոննէ,  
Բիւֆոն, Էրազմ Դարվին—նշանաւոր Զարլղ Դար-  
վինի պապը, Լիննէլ, Լամարկ, Կիւլիէ, Ս. Իլէր  
և այլն:

Իւրաքանչիւր զիտութիւն ունենում է մի հիմ-  
նական զաղափար, որը և զիտական օրէնք, կանոն  
է կոչւում:

Այդպիսի կանոնները զիտութեան էութիւնն  
են կազմում: Նրանց միջոցով ենք մենք հասկանում,  
թէ ինչ է կատարում մեր շուրջը, աշխարհում:  
Բայց զիտական օրէնքներ զուրս բերելու հա-  
մար անհրաժեշտ է ուսումնասիրել, քննութեան  
և թարկել բազմաթիւ դէպքեր ու երկոյթներ:

«Իւրաքանչիւր կենդանի արարած կոիւ է  
մզում իր զոյութիւնը պահպանելու համար»: Գոյու-  
թեան կոիւ.—դա նշանակում է, թէ իւրաքանչիւր  
արարած ուզում է աւելի լաւ ձեռփ և երկար  
պահպանել իր զոյութիւնը:

Դրա համար նա պէտք է ունենալ ապրելու,  
սնունդ ձեռք բերելու միջոցներ: Առանց սնունդի  
նա չի կարող ապրել. կմեռնի:

Իսկ ապրելու միջոց ձեռք բերելը հեշտ չէ  
մեր երկրի վրա:

Իւրաքանչիւր օր, իւրաքանչիւր վայրկեան  
ձնում են բազմաթիւ էակներ. իսկ սնունդն ու  
ապրուստի միջոցները բաւական չեն բոլոր ձնուած-  
ների համար:

Հէնց այդ պատճառով էլ ապրել կարողանում  
են միայն ուժեղները, միայն նրանք, որոնք կարող  
են սնունդ ձեռք բերել, իսկ թողերը ոչնչանում են:

Դա նկատում է ոչ միայն կենդանական, այլ  
և բուսական աշխարհում:

Մենք յաճախ տեսնում ենք, որ միւնոյն ծաղ-  
կամանում տնկած երկու ծաղիկներից մէկը թա-  
ռամում—չորանում է, իսկ միւսը աճում—ծաղ-

կում է և իր արմատները տարածում է ամբողջ ժաղկամանի մէջ:

Դրա պատճառն այն է, որ ժաղկամանի հողը չէր կարողանում բաւարար սնունդ մատակարարել երկու ժաղկին էլ, ուստի և կենդանի մնաց այն ժաղիկը, որն աւելի լաւ էր ժժում հիւլմերը, աւելի ուժեղ էր:

Այդ երկու ժաղկիները գոյութեան կոիւ մղեցին և յաղթեց ուժեղը:

Ամբողջ երկիրը կարելի է նմանեցնել մի ժաղկամանի, որի մէջ անում—մեծանում են անթիւ անհամար բոյսեր ու կենդանիներ:

Պարզ է, որ գրանք բոլորն էլ—խոտեր, ծառեր, ժաղկիներ, միջատներ, թռչուններ ու գաղաններ—բոլորը գոյութեան կոիւ պէտք է մղեն իրար դէմ:

Բոյսերն իրանց սնունդն ստանում են հողից, իսկ կենդանիները կերակրուում են բոյսերով կամ ուրիշ կենդանիների մոսկի:

Բոյսերն էլ գոյութեան կոիւ են մղում իրար դէմ և ի հարկէ չն կարող անվերջ անել ու բաղմանալ, որովհետեւ վերջիվերջոց հողը չպէտք է բաւականանալ նրանց բոլորի համար: Դրա հետ միասին կենդանիների սնունդն էլ որոշ սահման ունի:

Հենց այդ պատճառով էլ կեանքի յաղթանակը տանում են միայն ուժեղ բոյսերն ու կենդանիները, իսկ թուլերն անհետանում են:

Ուժեղ բոյսը կամ կենդանին իր յետեից ուժեղ սերունդ է թողնում, իսկ թուլը, ոչնչանալով կամ

բոլորովին ժառանգներ չի թողնում, կամ թողնում է շատ թուլ ու սակաւաթիւ սերունդ:

Երբ այդ նոր սերունգները դոյութեան կոիւ են սկսում, յաղթանակը դարձեալ ուժեղներին է բաժին ընկնում:

Եւ այլպէս կոիւն անցնում է սերունգից սերունդ, միշտ առաջ մղելով ուժեղներին և ոչնչացնելով թուլերին:

Եթէ իրար դէմ կոիւ մղող կենդանիները արածում են մի մարգաղետնի վրա, որի կանաչը չի բաւականացնում բոլորին, այն ժամանակ ուժեղները ճնշում, հեռացնում են թուլերին: Վերջինները սափուած են լինում յարմարուել ուրիշ պայմանների, բաւականանալ ուրիշ կերակրով:

Եթէ առաջ նրանք մարգաղետնի համեղ խոտը որոնելու համար պետք է ունենալին սուր աչքեր, նուրբ հոտառութիւն, ալժմ գրա փոխարէն պէտք է ունենան սուր ատամներ, երկար վիզ, որպէսպի կարողանան ծառի տերևներն ու ճիւղերը կրծել:

Ի հարկէ այդ փոփոխութիւնը յանկարծ չի կատարւում, այլ կամաց-կամաց, աստիճանաբար, երկար տարիների ընթացքում:

Բայց կոիւր դրանով չի բաւականանում, այլ նորից շարունակում է իր ընթացքը: Այստեղ էլ յաղթում են նրանք, որոնց ատամներն աւելի սուր են, վիզերն աւելի երկար:

Այլպէս ուրեմն գոյութեան կոուի շնորհիւ սրատես կենդանին, որ ունէր սովորական ատամներ և արածում էր գոյութար ներքեւ կախած, դառ-

նում է սովորական աչքերով, բայց երկար վզով ու սուր ատամներով կենդանի:

Առհասարակ երբ փոխում է կերակուրը, երկար ժամանակի ընթացքում փոխում է և նրա օրգանիզմը:

Ելգափիսով կենդանական մի տեսակից առաջ են դալիս երկու տեսակներ՝ մէկը արածում է, կըրծում է մարդագետնի խոտը, օրինակ ծին, իսկ միւսը ծառերի ճիւղերով ու տերեներով է կերակրում, օրինակ ընծուղար:

Բոյսերի մէջն էլ այդ միենոյն երկոյթն է տեղի ունենում:

Հէնց որ փոխում է մի որեւէ բոյսի սննդառութեան պայմանները, իսկոյն փոխուել է սկսում և նրա ձեր. ալգափիսով առաջ է գալիս բուսական մի նոր տեսակ:

Ուրեմն կեանքի պայմանների փոփոխութիւնը և առհասարակ գոյութեան կրիւր առաջացնում են բուսական ու կենդանական նոր տեսակներ:

Ահա դա է գոյութեան կոռուի էութիւնը, որի մտախն աւելի մանրամասն տեղեկութիւններ ունենալու համար անհրաժեշտ է դիմել բնական գիտութիւնների օգնութեանը:

### ԺԱ

«Բնութիւն» ասելով պէտք է հասկանալ այն ամենը, ինչ որ տեսնում ենք, լսում ենք, մի խօսք՝ այն ամենը, որի մտախն գաղափար ենք կաղմում մեր հինգ զգալարանքների միջացով:

Բայց, արգեօք, հնարաւո՞ր է իմանալ այն ամենը, ինչ որ գտնուում է բնութեան մէջ:

Երկիրը չափազանց մեծ է. նա իր մէջ պարունակում է անթիւ անհամար քարեր ու հանքեր. նա ժածկուած է բազմազան խոտերով, ժաղիկներով, ժառերով ու թփերով. նրա վրա սողում են, վաղում են, թռնում են բազմաթիւ միջատներ, սողուններ, թռչուններ ու գաղաններ:

Ելգ բոլորի հետ ժանօթանալլ շատ դժուար է, անհնարին է: Դրա համար անհրաժեշտ էն հարիւրաւոր տարիներ:

Բայց զիտնականին անհրաժեշտ չէ իւրաքանչիւր կենդանի արարածին առանձին առանձին ուսումնասիրելը. բաւական է ուսումնասիրել ամսող ցեղը:

Ամենքին յախանի է, որ երբ այգեպանը մի անձանօթ այզի է մտնում, իսկոյն կարողանում է որոշել թէ ո՞րն է խնձորենին, ո՞րն է տանձենին և այլն: Նա առաջին անգամն է տեսնում այդ ծառերը, բայց ճանաչում է, որովհետեւ ժանօթ է ամբողջ ցեղի բնորոշ յատկութիւնների հետ:

Ճիշտ ալգաէս է վարւում և բնական զիտութիւններ ուսումնասիրողը:

Նա ուսումնասիրում է կենդանիների, բոյսերի, հանքերի նշանաւոր յատկութիւնները և զրանց շնորհիւ էլ կարողանում է զանազանել առանձին տեսակները:

Նա բնութիւնը բաժանում է առանձին մասերի և ուսումնասիրում է նրանց յատկութիւն-

ները: Այդ մասերից իւրաքանչիւրը նա բաժանում է նոր մասերի և այդպէս շարունակում է, մինչեւ որ մասերի միջի տարբերութիւնը շատ չնշին լինի:

Այդպիսի բաժանումը իւրաքանչիւր գիտութեան մէջ կոչւում է գասակարգութիւն—կասիֆիկացիա:

Այժմ կենդանական, բուսական և հանքավին թագաւորութիւններն ունեն մի ամբողջ կասիֆիկացիա, որի շնորհիւ մենք կարող ենք հեշտութեամբ ուսումնասիրել բնութիւնը:

Անմահ զիտութիւնը կարգ է սիրում. առանց այդպիսի գասակարգութեան անհնարին կլինէր բնութիւնն ուսումնասիրել:

Ամենքին յացանի է, որ կենդանիների մեծ մասն ունի ողնաշար, ինչպէս օրինակ ընտանի կենդանիները, վայրենի գաղանները, թռչունները և ձկները:

Բայց կան և շատ կենդանիներ առանց ողնաշարի, ինչպէս օրինակ՝ ճանճերը, սարդը, թիթեռները, միջատները և այլն:

Հենց այդ պատճառով էլ կենդանական թագաւորութիւնը երկու բաժանմունք ունի, այն է 1) ողնաշարաւոր կենդանիներ և 2) առանց ողնաշարի կենդանիներ:

Այդ բաժանմունքներից իւրաքանչիւրն ունի մի քանի գասակարգ: Օրինակ ողնաշարաւոր կենդանիները բաժանուում են՝ կաթնասունների, ձկների, թռչունների և այլն:

Իւրաքանչիւր գասն էլ ունի իր ստորաբա-

ժանումները: Օրինակ կաթնասունների գասակարգը բաժանում է մսակերների (առիւծը, վազրը, արջը, դալլը), սմբակաւորների (ծին, կովը, էշը), կրծողների (նապաստակ, մոռկը) և այլն:

Իւրաքանչիւր ստորաբաժանումն ունի մի քանի ընտանիքներ: Օրինակ՝ մսակերներին պատկանում է կատուալին ընտանիքը, որի ներկայացուցիչներն են՝ կատուն, առիւծը, վազրը, շնալին ընտանիքները, որի ներկայացուցիչներն են՝ շունը, գալլը և այլն:

Իւրաքանչիւր ընտանիք բաժանում է ցեղերի, իսկ իւրաքանչիւր ցեղը՝ տեսակների: Օրինակ կատուալին ընտանիքը բազկացած է առիւծների, վազրերի, կատուների տեսակներից և այլն:

Վերջապէս իւրաքանչիւր տեսակն էլ ունի իր տարբեր ներկայացուցիչները. օրինակ՝ միան շները քանի, քանի տարբեր տեսակներ ունին:

Ահա այդպէս ամբողջ գասակարգութեան—կասիֆիկացիայի յատկութիւններն իմանալով, մենք կարող ենք որոշել, թէ այս կամ այն կենդանին, այս կամ այն բոյսը որ գասակարգին, որ ցեղին ունտանիքին է պատկանում:

Այսպէս օրինակ, շան մասին կարող ենք ասել. նա պատկանում է կենդանական թագաւորութեանը, ողնաշարաւորների բաժանմունքին, կաթնասունների գասակարգին (շունը կաթով է կերակրում իր ծագերին), մսակերների ստորաբաժանմունքին (շունը զինաւորապէս մսով է կերակրում), շների ընտանիքին և այլն:

Ուրեմն կարիք չկայ անպատճառ բոլոր կեն-

դանիների հետ մանօթանալու: Հարկաւոր է իմանալ կասիֆիկացիան և նրա յատկութիւնները:  
Այդ միւնոյն ձեռվ կարելի է վարուել նաև բուսական ու հանքային թաղաւորութիւնների վերաբերմամբ:

ԺԲ

Առաջ կարծում էին, թէ բոլոր բուսական ու կենդանական տեսակները միշտ գոյութիւն են ու նեցել երկրի վրա:

Հարկաւոր է նկատել, որ իւրաքանչիւր բոյսի կամ կենդանու կեանքը կախուած է ի միշի այլոց նրա մարմնի կազմուածքից:

Դիտնականները ուսումնասիրել են բազմաթիւ կենդանիների ու բոյսերի կեանքը, գտել են այն պայմանները, առանց որոնց այս կամ այն էակը չի կարող ապրել. իմացել են, թէ ինչու մի որոշ կալմուածքի տէր բոյսը կամ կենդանին իր համապատասխան պայմաններն է պահանջում և այն և այն:

Դիտութիւնը միշտ ապացուցներ է պահանջում. ուստի հարկաւոր էր փաստերը լաւ ուսումնասիրել, հարկաւոր էր իմանալ, թէ ինչպէս են ապրում բոյսերն ու կենդանիները, թէ նրանք ինչով են իրար նման, ինչով են տարբերութիւն:

Այդպէս վարուեց հանճարեղ գիտնական Զարլզ Դարվինը 1859 թուականին:  
Նա ուղում էր իմանալ, թէ ինչու բոյսերն ու

կենդանիները այդքան տարբեր տեսակներ ունեն: Դրա համար նա մի մեծ ձանապարհորդութիւն սկսեց, որպէսզի տեսնի թէ զանազան երկիրներում ինչպէս են ապրում զանազան բոյսերն ու կենդանիները, թէ ինչ պայմաններ են հարկաւոր իւրաքանչիւր տեսակի կեանքի ու զարգացման համար, թէ ինչու մի երկրում ապրում է այս բոյսը կամ կենդանին, իսկ մի ուրիշ երկրում՝ ուրիշը:

Այս, անմահ Դարվինը իր ամբողջ կեանքը նուիրեց զիտութեանը, աշխատեց, ուսումնասիրեց, հարց ու փորձ արեց, ըննեց և վերջապէս եկաւ հետեւալ նշանաւոր եղբակացութեանը, — գուցէ բոյսերի ու կենդանիների զանազան տեսակները առաջ են եկել նրանից, որ նրանք ապրում են զանազան պայմաններում, զանազան ձեւերով և ն կեանք վարում:

Բնութեան մէջ ամեն ինչ չափաղանց խելացի ձեռվ է շինուած:

Իւրաքանչիւր կենդանի ունի այնպիսի անդամներ և օրգաններ, որոնք համապատասխան են նրա կեանքի զարգացման:

Օրինակ, գայլը կերակրում է ոչխարի, կովի և այլ կենդանիների մսով. ուստի ունի սուր ատամներ: Հիւսիսալին եղբարուն ապրում է մշտապէս ծիւնով ժածկուած երկրում. ուստի ունի տաք մորթի, և այն:

Իւրաքանչիւր որդ, իւրաքանչիւր միշտա իր կեանքի համապատասխան կազմուածք ունի: Այդպէս է նաև բուսական աշխարհում:

Եթէ մի քիչ խորը մտածենք, այն ժամանակ կհամոզուենք, որ այդպէս էլ հարկաւոր է, որ ուրիշ կերպ չի էլ կարող լինել:

Եւ իսկապէս, ի՞նչ կլինէր, եթէ դավոր սուր ատամներ չունենար, թռչունը՝ կտուց ու թեր, ձուկը՝ լողաթեր ևալն: Կարող էին նրանք տպրել. իհարկէ ոչ:

Եթէ նրանց մի կերպ յար մարեցն էին, սովորեցնէին այդպիսի կեանքի, եթէ նրանք առնեին, դրանից դաձեալ ոչինչ չէր դուրս դայ, որովհետեւ կարճ ժամանակից յետոյ բոլորն էլ վերջապէս կանհետանալին և նրանց հետքն էլ չէր մնայ:

Դիտութիւնը բաց արեց, որ իւրաքանչիւր կենդանու կազմուածքը յարմարեցրած է նրա կեանքի պայմաններին:

Դիտութիւնը հետզհետէ զարգանալով, փորձեր անելով, իմացաւ որ կենդանական ու բուսական օրգանիզմները ինքնուրոյն կերպով չեն ստեղծւում կեանքի համար, այլ ինքը կեանքն է նրանց ձևափոխել, այս կամ այն կերպարանքը տուել:

Կեանքի պայմաններն են մարմնի կազմուածքը փոփոխութեան ենթարկում և տարբեր աեսակներ առաջնում:

ԺԴ

Միթէ հշմարիտ է, որ իւրաքանչիւր բոլով և կենդանու մարմնը փոփոխութեան է ենթարկում կենցաղավարութեան պայմանների համեմատ...

Գիտութիւնը, ինչպէս ասացինք վերեւում, մի որեւէ նշմարտութիւն ընդունելու համար, միշտ պահանջում է անհերեղելի ապացուցներ ու փաստեր:

Բայց կենդանական օրգանիզմի զանազան փոփոխութիւնները փորձերով ապացուցանելը այնքան էլ հեշտ չէ:

Անյարմար է վերցնել մի կենդանի, փոխել նրա կեանքի պայմանները և սպասել, որ դրա համեմատ կազմուածքն էլ փոփոխուի: Անյարմար է, որովհետեւ այդպիսի փոփոխութիւնները կատարւում են շատ երկար ժամանակում, աննկատելի կերպով:

Բայց այդպիսի փորձով կարելի է իմանալ, թէ ի՞նչ կլինի կենդանին, եթէ փոխենք նրա կեանքի պայմանները:

Հաղարաւոր տարիներ է, որ եղբ, ծին, էշը, շունը ծառալում են մարդուն, ընտանի են դարձել. բայց չէ՞ որ նրանք առաջ վայրենի դրութեան մէջ են եղել:

Մարդը նրանց կամաց կամաց ընտելացրել է և օգտակար է դարձրել:

Մեր եղների ու ծիերի նախահայրերը առաջ այնպիսի կազմուածք են ունեցել, ինչպէս Սփրիկէի և Սւստրալիալի այժմեան եղներն ու ծիերը:

Մեր եղջիւրաւոր անասունները այնքան փոխուել են, որ շատ քիչ են նման իրանց վայրենի ցեղակիցներին:

Ի՞նչպէս է կատարուել այդ երեսովիթը: Դրա պատասխանը հետեւեալն է. մարդը փոխել է նրանց կեանքի պայմանները և ուրիշ ոչինչ:

Առաջ եղները և ծիերը ապրում էին զաշտերում ու անտառներում. իրանք էին սնունդ որոնում. իրանք էին կոխւ մղում վայրենի զազանների գէմ: Իսկ այժմ նրանք ապրում են գոմերում, բոլորովին չեն հոգում սնունդի մասին, չեն կռւում զազանների գէմ, բայց դրա փոխարէն ստիպուած են լու ծ քաշել, ծանրութիւններ կրել:

Կեանքի ալզախի փոփոխութիւնը երկար ժամանակի ընթացքում համապատասխան փոփոխութիւն է առաջացրել մարմնի կազմուածքի մէջ:

Այդ միեւնոյն երեսիթը աւելի նկատելի է բոյսերի վերաբերմամբ:

Եթէ մի որեւէ վայրի բոյս անտառից ալզին տեղափոխենք, նա որոշ ժամանակից յետով շատ կիոխուի:

Ամենքին յայտնի է, որ մեր բոլոր խնձորենիները, սալորենիները և ուրիշ պտղատու ծառերը առաջ են եկել վայրի ծառերից, որոնց պտուղները գրեթէ անպէտք են ուտելու համար:

Շատ անգամ էլ մարդը որոշ նպատակով աշխատում է փոփոխութեան ենթարկել կենդանու կազմուածքը և հասնում է այդ նպատակին. օրինակի համար բաւական է լիշել ծիերի զաւօդները:

Աշխարհի բոլոր արարածները, նոյն իսկ միենոյն տեսակի ներկայացուցիչները տարբերուում են միմեանցից: Այդտեղ մեծ դեր է խաղում ժառանգականութիւնը:

Եթէ մարդ ուղում է ունենալ լաւ վաղող ծիեր, նա չոկում և զուղաւորցնում է բարձր ու

բարակ ոտներով ձիերին. գրանից առաջ է դալիս նոյնպիսի յատկութիւններով օժտուած սերունդ:

Այդ նոր սերունդից էլ նա ընտրում է ամենալաւերին և նրանց զուգաւորցնում է և ալզպէս շարունակում է, մինչև որ ստայցւում են չափազանց բարակ ու բարձր ոտներով ծիեր, որոնք իրանց ալզպիսի յատկութիւնների շնորհիւ կարողանում են արագ վագել:

Այդ միեւնոյն ծեռով մարդ կարող է խոշոր ու ուժեղ ծիեր առաջացնել — պահանջի համեմատ:

Բաղմազան պայմաններից կախում ունեցող ժառանգական յատկութիւնները անցնում են սերունդից սերունդ՝ մեծ կամ փոքր չափով:

Այզպիսով գաստիարակն էլ կարող է որոշ չափով ուժեղացնել իր սաների այս կամ այն ընդունակութիւններն ու բարոյական յատկութիւնները \*):

Ո՞րքան մեծ է ուրեմն գաստիարակի դերը, ո՞րքան բարձր նրա կոչումը:

Իւրաքանչիւր մայր բնականաբար պէտք է և դաստիարակի դեր կատարէ իր զաւակների վերաբերմամբ: Բայց, գժրադղաբար, մեր տասը կանանցից ինը գրեթէ զազափար չունեն ժամանակակից մանկավարժութեան և առողջապահութեան մասին:

Ցաւալի իրողութիւն է սա, որի մասին ուրիշ անդամ խօսել ենք արդէն: Դառնանք ուրեմն մեր նիւթին:

\*.) Տես իմ «Մեր նեարդերը» և «Փառանգականութիւն» գաստիարակութիւն» գրքոյները.

Վերեռում առաջ բերած օրինակները ցոյց են տալիս, որ անհատի մի որեւէ յատկութիւնը կարելի է ժառանգականութեան միջոցով այնքան զարդացնել, որ առաջ կզայ բոլորովին նոր սերունդ: Հարկաւոր է միայն համապատասխան ընարութիւն անել:

Կենցաղավարութեան պայմանների փոփոխութիւնը առաջացնում է կաղմուածքի փոփոխութիւն: Այդ մենք աեսանք ընտանի և վայրենի կենդանիների օրինակից:

Մկրում այդ փոփոխութիւնը աննկատելի է մնացել, իսկ յետոյ հետդեմէ զարգանալով զգալի նշաններ է ցոյց տուել: Հազարաւոր տարիներ առաջ եզր իր մօտ չէր թողնում ոչ ոքի, նա վայրենի էր բառիս բուն նշանակութեամբ. իսկ այժմ նա հեղ ու հնազանդ կենդանի է դարձել: Վայրենի կատուն մազցում էր ծառերի վրա թռչուններ որսալու համար. իսկ այժմ խելօք նստած է տանը և հանդարտութեամբ ընդունում է մարդու փաղաքանքները: Վայրի, դառն ու թթու խնձորը դարձել է քաղցր ու համեղ պտուղ:

Եւ այդ բոլորը կատարուել է կամաց կամաց, աննկատելի կերպով, զիստորապէս կեանքի պայմանների փոփոխութեան շնորհիւ:

Միայն մարդկանց կեանքը չէ, որ ենթարկում է փոփոխութեան: Կենդանիների կեանքն էլ զանազան հանդամանքների շնորհիւ մերթ ընդ մերթ փոփոխում է. իսկ այդ փոփոխութիւնը ժառանգականութեան միջոցով ձեափոխում է և կաղմուածքը,

ուստի և տառչ են դալիս կենդանական նոր տեսակներ:

Նոյնը կարելի է ասել և բոյսերի վերաբեմամբ: Բայց ի՞նչն է ստիպում կենդանիներին և բոյսերին իրանց կեանքը փոփոխելու:

### ԺԴ

Ինչպէս յայտնի է, ընտանի կենդանիները շատ քիչ են հոգ տանում իրանց սնունդի մասին, որովհետեւ մարդու վրայ է ընկնում այդ հոգու: Բայց այդպիսի բազգաւոր կենդանիները շատ չնվն թիւ են կաղմում ամբողջ աշխարհի անթիւ անհամար կենդանի արարածների համեմատութեամբ:

Առհասարակ իւրաքանչիւր կենդանի արարած ապրելու համար պարաւոր է որոնել, ձեռք բերել այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է նրա կեանքին:

Օդ ձեռք բերելը գժուար չէ. զրա համար հարկաւոր է ունենալ շնչառութեան առողջ ու կանոնաւոր գործարաններ և օգտուել մաքուր օդից:

Աշխարհը մեծ է և նրա բարիքները շատ բայց այլպիսի բարիքների կարիք ունեցողների թիւն էլ շատ մեծ է. ուստի իւրաքանչիւր կենդանի արարածի համար հեշտ հարց չէ սնունդ ձեռք բերելը:

Իւրաքանչիւր կենդանի շարունակ բայմանու, անելու յատկութիւն ունի և այդ անումը աւելի լավն չափ կատանար, եթէ մահը չոչնչացնէր ձնուածներից շատ շատերին:

Կան կենդանիներ, որոնք ամեն օր են ձնում:

Կան այնպիսիներ, որոնք իւրաքանչիւր անդամ տասնեակներով ու հարիւրներով են ձագեր բերում:

Դժուար է երեակայել, թէ ի՞նչ կլիներ, եթէ բոլոր կենդանիները անարգել բազմանալ կարողանալին և բոլոր ճնուածներն էլ ապրէին:

Սուանց չափաղանցութեան կարելի է ասել, որ մի գեղեցիկ օր նրանք կլցնէին ամբողջ աշխարհը:

Բայց որտեղից պէտք է սնունդ ստանալին այզքան կենդանի արարածները:

Աշխարհիս մնացարար նիւթերը որոշ սահման ունեն, ուստի և կենդանիների բազմանալն էլ որոշ սահմանից այն կողմը չի անցնում:

Թէև կենդանի արարածները ամեն տեղ բացարձակ կռիւ չեն մղում իրար դէմ, բայց այնուամենայիւ նրանք միշտ մրցում են մնունդ ծեռք բերելու համար:

Ծնուածներից շատերը մեռնում ոչնչանում են: Ով որ կարող է սնունդ ծեռք բերել, ուրիշի բաժինը խլել, նա ապրում է. իսկ ով որ չի կարող այդ անել, նա ոչնչանում է:

Այստեղ էլ, ինչպէս և ամեն կռւում, յաղթում են աւելի ուժեղները:

Բայց այստեղ «ուժեղ» և «թուլ» խօսքերը աւելի լայն մտքով պէտք է հասկանալ:

Փոքրիկ միջատները, իհարկէ, չափաղանց թուլ են նոյն իսկ ամենաթուլ շան համեմատութեամբ: Բայց կարող է պատահել, որ այդ միջատները կմնան ապրելու, իսկ թուլ շները կոչնչանան:

Դրա մէջ զարձանալու ոչինչ չկայ, որովհետեւ միջատները զոյութեան կռիւ են մղում ոչ թէ շների, այլ նոյնպիսի միջատների դէմ:

Կենդանի արարածները կռիւ են մղում կեանքի պայմանների համար. բայց երբեմն այդ պայմաններն էլ ծառայում են իրեւ կռուի դէնք:

Եթէ կենդանու մարմինը որոշ յարձարութիւններ ունի կերակուր ծեռք բերելու համար, նա հեշտութեամբ գտնում է իր սնունդը: Հակառակ դէպքում կենդանին կմնայ զուրկ ու ճնշուած:

Դա այսպէս ասած՝ կոյր կռիւ է, որի դեկավարներն իրար բոլորովին չեն էլ ճանաչում:

Դա կռիւ է առանց թշնամութեան, առանց ատելութեան:

Բուսական աշխարհում էլ նոյնպիսի կռիւ է տեղի ունենում, ինչպէս կենդանական աշխարհում:

Այդ դէպքում, իհարկէ, խօսք անդամ չի կարող լինել թշնամութեան մասին:

Ուժը ամեն անդամ օգուտ չի բերում կենդանիներին: Յահախ պատահում է, որ ուժեղ ոտներ ունեցող կենդանիները ոչնչանում են, իսկ թուլ ոտների, բայց երկար վզի տէր կենդանիները յաղթում են, որովհետեւ կերակուր ծեռք բերելու համար երբեմն երկար վիզն է օգտակար և ոչ-ամուր ոտները, ինչպէս օրինակ ծառերից նիւղեր ու տերեներ պոկելու համար:

Եթէ այդ երկու տեսակ կենդանիները իրար դէմ բացարձակ կռիւ սկսեն, այն ժամանակ կյաղթեն, իհարկէ, ամուր ոտներ ունեցողները. բայց

գոյութեան կոյր կուռում յաղթում են նրանք, որոնք  
աւելի յարձարութիւններ ունեն զրա համար:

Կենցաղավարութեան իւրաքանչիւր տեսակը  
պահանջում է իր համապատասխան յարձարութիւն-  
ները:

Մի տեսակի համար յարձարուած կենդանին  
չի կարող ապրել կենցաղավարութեան մի ուրիշ  
տեսակով:

Օրինակ հիւսիսային եղչերուն ուժեղ կենդանի  
է, բայց եթէ նրան ասնենք Ա.փրիկէ, նա չի  
կարողանայ ապրել, որովհետեւ նրա կազմուածքը  
միայն ցուրտ կլիծալի համար յարձարութիւններ  
ունի:

Լաւ յարձարութիւններ ունեցող օրգանիզմը  
յաղթում է, իսկ վատր՝ ոչնչանում: Այդպէս է  
դոյլութեան կոյր կոռուի օրէնքը:

Այդ կոիւր չի երեսում: Երեսում են նրա  
հետեանքները:

### ԺԵ

Բնութիւնը ինքն ընտրում է պէտքական ա-  
րարածներին, նրանց ապրելու և բազմանալու հնա-  
րաւորութիւն է տալիս, իսկ անպէտքներին կեան-  
քից դուրս մղում, ոչնչացնում է:

Ծնուած բոլոր կենդանիները միաչափ պիտա-  
նի չեն կեանքի համար: Նրանցից շատերը չեն  
զիմանում դոյլութեան կոռուին և կորչում, անհե-  
տանում են:

Բնութիւնը նրանց ոչնչացնում է, որպէսզի  
տեղ տայ աւելի լաւերին, պէտքականներին:

Այս վերջիններն իրանց առաւելաւթիւնների  
համար բնութիւնից ստանում են ամենաբարձր  
վարծարութիւն, որի անունն է կեանք:

Բնութեան այգպիսի վերաբերմունքը գաժան  
է և անգութ. բայց ուրիշ կերպ անհնարին էր:  
Առանց զրան չէր լինի կեանք. չէին լինի բոլուեր,  
կենդանիներ և մարգիկ, որոնք շատ լաւ հասկա-  
նում են այդ գաժանութիւնը:

Բնութիւնը աշխարհ է բերում անթիւ անհա-  
մար արարածներ, բայց նրանցից շատերին՝ ալսպէս  
ասած՝ ստիպում է մեռնել, որպէսզի դրանով տեղ  
բանայ լաւերի, պէտքականների համար:

Բայց այդ մնացածներին էլ նա ստիպում է  
շարունակել կոիւր, յաղթել կամ յաղթուել:

Եւ այգպէս անվերջ կոիւր է տեղի ուենում  
մեր շուրջը, աշխանի բոլոր մասերում: Գոյութեան  
անողոք կոիւր:

Աճում են բոլուերն ու բազանում: Նրանք  
պէտք է հողից շարունակ նիւթեր ու խոնաւու-  
թիւն ծծեն, իսկ զրա համար հարկաւոր է կոիւր,  
յաղթութեան կամ պարաւութեան հետ միասին:

Զանազան միշտաներ ապրում են բոլուերի  
հիւթով, որ գարծեալ առանց կոռուի չի կարելի  
ձեռք բերել:

Թուչունները կերակրում են միշտաներով,  
որոնց համար նրանք մրցում են իրար գէմ, կոիւր  
են մղում:

Դարձեալ կոիւ:

Միքանի կենդանիներ որսում են թռչունների:  
Պարզ է, որ այս գէպը որում էլ աւելի ճարպիկներն  
ու ուժեղներն են յաղթանակ տանում, իսկ միւս-  
ները առանց մնունդի մնալով կորչում են:

Ամեն տեղ թագաւորում է գոյութեան կոիւր:  
Ամենափոքրիկ միշատից սկսած մինչև ամենամեծ  
զաղանը — բոլորը ենթարկում են այդ կոռուին:

Այդ կոիւր երեմն կատարւում է աննկատելի  
կերպով, այսինքն հակառակորդները բացարձակ կեր-  
պով իրար գէմ կանգնած չեն լինում, թշնամու-  
թիւն ցոյց չեն տալիս, բայց այնուամենայնիւ վնա-  
սում են իրար, ոչնչացնում են միմեանց:

Բացի այդ խուլ կոռուից՝ կայ և բացարձակ կոիւ-  
րոյութեան համար, երբ հակառակորդները կուում  
են իրար գէմ, մինչև որ յաղթեն կամ յաղթուին:

Թրթուռն ուտում է բոյսեր և ոչնչացնում է  
նրանց կեանքը: Թռչուններն ուտում են թրթուռ-  
ներին, զազանները՝ թռչուններին, եալին:

Բացարձակ կոիւ, մահաբեղ կոիւ...

Սակայն այդ կոիւր այնչափ կորստաբեր չէ,  
որքան առաջինը, որովհետեւ չի կարող արագ կեր-  
պով ոչնչացնել կենդանական կամ բուսական մի  
ամբողջ ցեղ: Դալլը ուտում է գառին, թռչունները՝  
միշատներին, բայց այնուամենայնիւ դառներն ու  
միշատները ապրում են և անում:

Բոլորովին այլ կերպ է լինում խուլ, կամ ու-  
րիշ խօսքով ասած՝ կոյր կոռուի ժամանակ, երբ  
յաղթուածները զրկուում են ապրուստի միջոցից:

Եթէ միշատների ու թռչունների կերակուրը  
միատեսակ լինէր, այն ժամանակ միշատները շատ  
հեշտութեամբ կանկետանալին աշխարհից՝ իբրև ա-  
ռելի թռչլ արարածներ:

Բայց որովհետեւ նրանց կերակուրը տարբեր է,  
ուստի միշատները դեռ կարողանում են ասլրել:  
Նրանց հարկաւոր է միայն պաշտպանուել, ժամկուել  
թշնամիներից — թռչուններից:

Իհարկէ, որտեղ շատ թռչուններ կան, այնտեղ  
էլ շատ միշատներ են ոչնչանում:

Ոհա այգպիսով բացարձակ կոիւր մի տեսակ  
ընարութիւն է անում բնութեան բազմազան արա-  
րածներից: Օրինակ, եթէ մի տեղ շատ գաղաններ  
կան, նրանք ոչնչացնում են շատ թռչունների,  
ուստի և միշատներն ու որդերը բազմանում են:

Դաշտային մկները կերակրում են միշատներով:  
Որտեղ շատ մկներ կան, այնտեղ քիչ են միշատ-  
ները և ընդհակառակը՝ քիչ մկներ եղած տեղում  
բազմանում են միշատները:

Այդպէս ուրեմն գոյութեան կոռուի շնորհիւ  
կենդանիների մի տեսակը կապուած է մէկ ուրիշի  
հետ: Մէկի գոյութեան պայմաններից կախուած է  
միւսը:

ՃԶ

Վնասակար ու վտանգաւոր հարևաններից  
հեռու մնալը դեռ յուսալի միջոց չէ կենդանի արա-  
րածի համար:

Որտեղ էլ որ նա լինի, անշուշտ կունենաց իր  
թշնամիները, ոչնչացնողները, որոնցից միշտ պէտք  
է զգուշանալ:

Իւրաքանչիւր կենդանի արարածի համար փախ-  
չին ու թաղնուելը նոյնքան կարեոր է, որքան և  
կերակուր ծեռք բերելը:

Բայց այդպիսի ընդունակութիւն ունենալն էլ  
կախուած է մարմնի կազմուածքից: Արագ վազել  
իմացող կենդանին հեշտութեամբ կարող է փախչել,  
վտանգից խոյս տալ: Խոկ գանդաղաշարժն անկարող  
է այդպէս վարուել:

Այսուղ էլ բնութիւնն ընարում է աւելի  
ընդունակներին:

Կան այնպիսի կենդանիներ ու բգեղներ, որոնք  
նոյնպիսի գոյն ունեն, ինչպէս ծառերի ճիւղերն ու  
աերեները:

Այդ յատկութիւններն առաջ են եկել գոյու-  
թեան կռուի շնորհիւ: Թոչունները յանձախ չեն  
նկատում ճիւղերի և աերենների գոյն ունեցող թի-  
թեռներին ու բգեղներին, որոնք այդպիսով ապ-  
րում են աւելի ապահով ու անվտանգ, քան թէ այն  
թիթեռներն ու բգեղները, որոնք զուրկ են այդ-  
պիսի յատկութիւններից:

Ուրեմն, բնական ընարութեամբ կեանքի հա-  
մար աւելի պէտքական են այն թիթեռներն ու  
բգեղները, որոնց գժուար է նկատել:

Կենդանի արարածի համար ամբողջ աշխարհը  
կռուի ասպարէղ է: Նա ստիպուած է՝ մերթ կռուել  
իր յեղակիցների դէմ, մերթ պաշտպանուել ուրիշ

յեղի կենդանիներից, մերթ փախչել ու թագնուել  
նրանցից:

Եւ եթէ այս կամ այն միջոցը ամենանպատա-  
կայարմարն է, նրա համեմատ էլ ընդունակութիւն  
է զարգանում երկար տարիների ընթացքում:

Միւնոյն զոյութեան կորիւն է, որ թիթեռ-  
ներին ու բգեղներին բոյսի գոյն է առել, վայրի  
եզներին՝ պինդ ու երկար եղջիւրներ, գալիքն՝ սուր  
ատամներ, արշին՝ ուժեղ թաթ, ևալին:

Ենթազրենք թէ մի որեւէ կենդանի հեշտու-  
թեամբ յաղթում է ուրիշ յեղի կենդանիներին:  
Բայց այդ գեռ բաւական չէ. նա պէտք է կարո-  
ղանալ մրցել իր յեղակիցների դէմ էլ, որոնք նոյն-  
պիսի ոլժ և ընդունակութիւններ ունեն: Եւ այդ  
մրցման մէջ յաղթողը մնում է ապրելու, իբրև  
ամենապէտքականը:

Կենդանիների մի յեղի, մի աեսակի թշնամա-  
կան յարաբերութիւնը գէպի մի ուրիշ յեղ առա-  
շացնում է որոշ ընդունակութիւններ, որոնք աւելի  
զարգանում են միւնոյն յեղի անդամների փոխա-  
գարծ մրցմամբ:

Այդ կոյր կռուի մէջ անզրադառնում են կեն-  
դանի արարածների բոլոր յարաբերութիւնները թէ  
գէպի շրջապատող բնութիւնը և թէ գէպի միմեանց:

Մարմնի կազմուածքի նմանութիւնը առաջա-  
ցնում է կենցաղապարութեան նմանութիւն:

Գոյութեան կռուի բնթացքում կենդանի ա-  
րարածը սովորում է ապրել, վարժւում է այդ  
արհեստի մէջ:

Այս կամ այն կենդանին սերունդից սերունդ անցնող կռուի շնուհիւ ձեռք է բերում ուժեղ թաթեր և պինդ ոտաներ, եթէ նրան ոչ է հարկաւոր. սուր աչքեր, նուրբ լսողութիւն՝ եթէ հարկաւոր է թշնամուց միշտ զգուշանալ. երկար ու ճկուն վիզ՝ եթէ հարկաւոր է զլուխը չորս կողմք շարժել, ևալն:

Այդ փոփոխութիւնը կատարւում է կամաց կամաց, աստիճանաբար, այնպէս որ նրան նկատել չի կարելի մի սերունդի վրա: Բայց սերունդից սերունդ անցնելով, նա հետզհետէ աւելի ու աւելի է նկատելի դառնում:

Իւրաքանչիւր սերունդ ժառանդաբար թողնում է հետեւեալ սերունդին իր ամբողջ ունեցուածքը — մարմնի լատկութիւններն ու առանձնալատկութիւնները:

Այդ միենոյն օրէնքով թոյլ արարածներն էլ լանձնում են ժառանգներին իրանց թուլութիւնը, ուր և շարունակուող կռուի ընթացքում հետզհետէ մեծանալով, առաջացնում է այլասերում և վերջ՝ կատարեալ կորուստ:

Այդպիսով մէկը մեռնում է, կորչում է, իսկ միւսը աւելի զօրեղանում է, աւելի զարգանում. իսկ դոյութեան կոիւր շարունակում է իր ընթացքը, դարձեալ կատարում է իր ընարութիւնը:

Բնութեան մէջ միշտ շարժում է կատարուում, շարժում դէպի վեր կամ դէպի վար: Կենդանի արարածների մի մասը կեանքի սանդուղքով վերև է բարձրանում, իսկ միւս մասը վար է իշնում:

Վայ նրան, ով վար է իշնում: Կորուստն է նրա բաժինը:

ԺԷ

Գոյութեան կռուի և կենսական վարժութիւնների շնորհիւ մշակուում են օդտակար յատկութիւններ:

Դա է պատճառը, որ գարբինը ուժեղ ձեռքեր ունի, զութակահարը — զարդացած մատներ:

Կենդանի արարածը անզիտակցօրէն վարժեցնում է իր անդամները: Նա այդ մասին ոչինչ չի մտածում, բայց այնպէս է զուրս դալիս, որ ամենաշատ աշխատող անդամներն ու օրգանները հետզհետէ զարդանում են և աւելի օգտակար գառնում կեանքի համար: Իսկ եթէ չեն աշխատում, չեն վարժում, կորցնում են իրանց ընդունակութիւնը \*):

Զաշխատող անդամները մի քանի սերունդից յետոյ դառնում են չափազանց մանր և վերջիվերջոյ անհետանում են:

Երեսում է կեանքն այնպէս է անում, որ մարմնի ամենանհրաժեշտ ու դործնական անդամներն ու օրգանները աւելի են զարգանում, աւելի են ընդունակ դառնում:

Գոյութեան կռիւր հետզհետէ աւելի ու աւելի զարդացնում է լաղթողի մարմնի անդամները և

\*): Տես իմ «Մարմնամարզութիւն» դրսուկը:

հնշում, սակաւ ընդունակ է դարձնում յաղթուած ծին:

Բայց մրտեղից են գոյութիւն ստացել աշխարհիս բազմազան արարածները, նրանց պէս պէս դաստկարգերն ու աեսակները:

Վերևում ասացինք, որ ամենառաջեղ, ամենակոյք կոիր կոիր մղում է միւնոյն տեսակի կենդանիների մէջ:

Դրա պատճառը շատ պարզ է. միւնոյն աեսակի կենդանիները միաձեւ կեանք են վարում, միաձեւ սուռնդ են ստանում, միւնոյն թշնամիների դէմ են մաքառում, մարմնի միւնոյն անդամներով ու օրգաններով են գործում:

Որքան աարբեր է կենդանիների կենցաղավարութեան ձեր, նոյնքան թոյլ է նրանց փոխադարձ կոիր:

Եթէ նրանք ապրում են բոլորովին տարբեր ձերով, եթէ կերակուում են դանազան հիւթերով, այն ժամանակ նրանց մէջ կոիր չի լինի:

Հէնց այդ պատճառով էլ իւրաքանչիւր կենդանու համար օդտակար է ապր ել միւսներից քեչ տարբեր ձեռքի:

Հէնց այդ պատճառով էլ իւրաքանչիւր կենդանի արարած աշխատում է իր կենցաղավարութեան ձեռվ քեչ շեղուել միւսներից:

Նա այդ անում է կուրօրէն, անզիտակցօրէն, և նրա այդ յատկութիւնը զարգանում է աստիճանաբար, երկար ժամանակի ընթացքում:

Այդիսով պատահում է, որ միասնասակ կեանք

վարող կենդանիների ժառանգները մի քանի սեռունդից յետոյ սկսում են բոլորովին աարբերուել իրանց կենցաղավարութեամբ:

Այժմ ճանճերով ու միշտաներով կերակրուող կենդանիների նախահայրերը հազարաւոր տարիներ առաջ կերակրուելիս են եղել բոյսերով:

Այդ փոփոխութիւնը կատարուել է աննկատելի կերպով, կամաց-կամաց, գարծեալ գոյութեան կոուի շնորհիւ:

Գիտակցող արարածների կոիր շատ անգամ վերջանում է նրանով, որ հակառակորդները համաձայնում են բաժանուել. մէկը մի գործով է սկսում պարապել, միւսը—մի ուրիշ գործով և նրանց շահերը այլևս չեն ընդհարւում:

Այդ միւնոյնը կատարուում է ընութեան մէջ: Երբ կերակուրը սակաւ է, այն ժամանակ կենդանիների մի մասը սկսում է ուրիշ տեսակ կերակուր որոնել.

Երբ շարունակ գործածութեան մէջ գտնուող օրդանները սկսում են թուլանալ, յոգնել, այն ժամանակ կենդանին դիմում է իր միւս օրգանների օդնութեանը, ուրիշ խօսքով ասած՝ նա քիչ փոխում է իր կենցաղավարութիւնը:

Այդ երեսովթը անցնում է սերունդից սերունդ օրգանները հետզհետէ փոփոխութեան են ենթարկուում և այդպիսով առաջ է գալիս կենդանիների կամ բոյսերի մի նոր տեսակ, որ տարբերում է առաջինից, կոիր չի մտում նրա գէմ:

Նոր տեսակի մէջ նորից սկսում է նոյն երե-

ւոլթը, որ նորից առաջացնում է տարբեր տեսակներ:

Բայց ինչու աեսակների թիւր անսահման չէ:

ԺԲ

Որքան շատ է հեռանում կենդանի արարածը իր հին տեսակից, նոյնքան հեշտանում է նրա կեանքը, նոյնքան հեշտանում է բեղմնաւորութիւնը:

Բայց որովհետև իւրաքանչիւր յատկութիւն ենթարկում է մայր բնութեան դատաստանին և բնարութեանը, ուստի այս գէպը ում էլ ապրելու մնում են միայն նրանք, որոնց մարմինն ու կեցազը աւելի մեծ չափով է շեղուած նախատիպից, որոնք աւելի շատ յատկութիւններ ունին գոյութեան կոռուի համար:

Հէնց այդ պատճառով էլ բուսական և կենդանական աշխարհներում մենք տեսնում ենք այնքան բազմաթիւ շեղուածներ, այնքան բազմազան ցեղեր, դասակարգեր ու տեսակներ:

Սակայն բոլոր տեսակներն էլ միենոյն ճանապարհով չեն առաջացել, միենոյն ձեռով գոյութիւն չեն ստացել:

Զանազան բնաւանիքները առաջ են եկել մի դասակարգից զանազան դասակարգերը՝ մի կարգից և այլն:

—Եթէ յետ նայենք, իրաւացի կերպով ասում է զիտնական Դաւիդսոնը, կտեսնենք, որ որքան

հին է աշխարհը, նոյնքան պարզ է, նոյնքան սահաւաթիւ ու միտօն են կենդանիների և բոլութեսակները: Ուրիշ խօսքով ասած՝ առաջ աշխարհը աւելի պարզ է եղել, իսկ ժամանակի ընթացքում նա բարգացել է, բազմացնելով իր արարածների ձեւերն ու ցեղերը:

Տեղտ է հասկանալ, որ կենդանական և բուսական ամբողջ աշխարհը առաջ է եկել մի քանի պարզ ձեւերից կամ մի հիմնական ձերից—դոյութեան կռուի և բնական բնարութեան շնորհիւ:

Միրելի ընթերցող, խնդրում եմ չղարմանալ, որ մարդկացին ցեղն էլ առաջ է եկել նոյն ձերից, նոյն ճանապարհով, ինչպէս և կենդանական միւս տեսակները:

Լսեցէք. մարդու նախահօր ժառանգները հետզհետէ շեղուելով իրանց նախատիպից, հետզհետէ ձեւափոխելով իրանց կազմուածքը, առաջ են բերել մարդուն: Միւսներն էլ ձեւակերպել են զանազան կենդանիների:

Զէ՞ որ կար ժամանակ, երբ մարդիկ բոլորովին վայրենի էին. գեռ այժմ էլ կան ժողովուրդներ, որոնք ապրում են վայրի կենդանիների նման:

Խելքն ու զգացմունքը որոշ յատկութիւններ են. նրանք բոլոր միւս յատկութիւնների նման արտայալտում և զարգանում են բնական բնարութեան և գոյութեան կռուի շնորհիւ:

Իսկ զոյութեան կռիւր բոլոր կենդանի արարածների համար ընդունում է մի նշանաբան՝ ապ-

բել, որքան կարելի է երկար, բեղմնաւորուել, որքան կարելի է շատ:

Այդ բոլորի համար օգտակար են ոչ միայն արտաքին լատկութիւնները, այլ և խելքն ու որոշ զգացմունքներ:

Եթի առաջին մարդը սկսեց շեղուել իր նախահօրից, նա շեղուեց ոչ միայն արտաքին ծեւերով, այլ և իր խելքով, հոգեկան լատկութիւններով ու զգացմունքներով:

Բնութիւնը ընտրում էր կեանքի համար այնպիսի մարդկանց, որոնք ունեին աւելի զարգացած խելք, աւելի խոր զգացմունքներ. որանք սերունդից սերունդ անցնելով, ժառանգութեան և բնական ընտրութեան շնորհիւ աւելի ևս զարգացել են:

Եւ այդպիսով հազարաւոր սերունդներից յետով վերջապէս լայտնուել է բնութեան թաղն ու պսակը—մարդը:

Բայց ցաւօք սրտի պէտք է խոստովանել, որ գեռ այժմ էլ բնութեան սիրասուն զաւակը—մարդը, պատրաստ չէ ոչ միայն հոգով, այլ և մարմնով:

Պրոֆեսոր Մեծիկովը երկու տարի առաջ Պարկում կարգացած իր հետաքրքիր զասախօսութիւնների մէջ հարցեր էր գնում, թէ ո՞վ ենք մենք, ինչպէս է մեր բնութիւնը, ո՞րտեղից ենք մենք եկել և ո՞ւր ենք գնում և այն և այլն:

Այդ հարցերը կարօտ են վերջնական հետազոտութեան և հաստատութեան:

Եթի որ մեր նախահայրը ապրում էր անտա-

ռում և կերակրում էր զիխաւորապէս հում ու բուսական կերպով, այն ժամանակ նրա համար օդտակար էր ունենալ խոտակեր կենդանիների նման աղիքացին խողովակ՝ որդածե լաւելուածով, փակ և հաստ աղիքներով \*), որոնք մի տեսակ պահարանի գեր էին կատարում պաշարեղէնի համար:

Նա պէտք է պինդ ու զուրս ընկած ճնօտների վրա ունենար երեսուն երկու ատամներ, որպէսզի կարողանար ծածել իր կոպիտ կերակուրը:

Նա չէր կարող շորեր կարել, ուստի և պահպանում էր իր բնական մուշտակը, որ պաշտպանում էր նրան ցրտից ու վատ եղանակից:

Իսկ մենք...

Մենք մաքրում ենք մեր կերակուրը, եփում ենք. մենք մառաններ ու պահարաններ ունինք պաշարեղէնի համար:

Մենք այս ստիլուած չենք վախիխելով ուտել մեր կերակուրը և ամեն մի շշուկ լսելիս թողնել ու փախչել, առանց ծամելու կու տալով մնունդը:

Այս, այժմ փոխուել են կենցաղավարութեան պայմանները, բայց մենք գեռ պահպանել ենք բոլոր վերոչիշեալ օրգանները: Նրանք մեզ օգուտ չեն տալիս, իսկ վնասը ահազին է:

Միայն աղիքների որդածե լաւելուածը իր հիւանդութեամբ անթիւ անհամար զոհեր է տանում մատաղ սերնդից, որովհետեւ զիխաւորապէս

\*) Տես «Ստամոքսի կատարը» գըքցիկի պատկերը.

երեխաներն ու պատաճիներն են սահմում ապ-  
պենդիցիտ (փակ աղիքի բորբոքումն) կոչող  
հիւանդութիւնը:

Հաստ աղիքը շատ լաւ մարսում է բուսական  
կոշտ կերակուրներ՝ խոտ, տերե և ալին, ուստի նա  
շատ օգտակար է կովերի, ծիերի, ձագարների համար:

Իսկ մեզ համար նա բոլորին աւելորդ է, որով-  
հետեւ մենք խոտով չենք կերակրում և հաստ  
աղիքի ծիւս դերը շատ լաւ կատարում են բարակ  
աղիքները:

Իրեւ հաստատ ապացուց կարելի է լիշել այն  
փաստը, որ մարդ շատ լաւ ապրում է և այն ժա-  
մանակ, երբ հաստ աղիքը անգործութեան է մատ-  
նուած կամ երբ նրան բոլորովին կարել—հանել են  
անդամահատութեան ժամանակ:

Այն ինչ այդ մեծ ու անպէտք օրգանը շատ  
անդամ մեծամեծ վնասներ է հաշցնում մեր մար-  
մնին. օրինակ նրա մէջ հաւաքը ում մնում են  
ստամոքսի արտադրած անպէտք նիւթերից, որոնք  
փտում են և վնասներ առաջացնում (\*):

Հենց այդ պատճառով կլ նրա մէջ զարգանում  
են ահազին քանակութեամբ միկրոբներ: Բացի դրա-  
նից շատ անդամ այդ նիւթերը փլթում են, թու-  
նաւորում են արիւնը և զրանով կաշու զանազան  
հիւանդութիւններ առաջացնում (\*\*):

\*) Պատրաստում է տպագրութեան համար «Աղիք-  
ների կատարը և թթախտ»:

\*\*) Տես իւմ «Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը» գլր-  
քըկը:

Բայց այդ դեռ բոլոր չէ. այդ անկոչ ժա-  
ռանգութեան շնորհիւ մենք ստիպուած ենք չբա-  
ւականանալ թեթև կերակրով և ընդունել նաև  
անպէտք ու դժուարածարս նիւթեր, որպէսզի աշ-  
խատանք տանք հաստ աղիքին:

Գլխի և մարմնի մոզերը, «իմաստութեան»  
կոչող աստաճները—այդ բոլորը մեր նախահօր ան-  
օդուտ ընծաներն են, որ հեշտութեամբ զարգաց-  
նում են զանազան միկրոբներ, որոնք և սարսա-  
փելի տանջանքներ են պատճառում քաղաքակիրթ-  
մարդուն և նրան երբեմն վաղաժամ դերեզման են  
իշեցնում:

Որովեսոր Վիդերսհայմի հաշւով մեր մարմնի  
մէջ հարիւր քսան և չորս հատ այգախիսի աւելորդ  
օրգաններ կան, որոնք վերջիվերջու պէտք է անհե-  
տանան:

Այդպիսի օրգանները ցոյց են տալիս, որ մար-  
դու մարմնի կազմուածքը դեռ կատարելազործուած  
չէ, որ նրա հոգեկան և ֆիզիքական աշխարհները  
ներդաշնակ չեն:

Մարդը պէտք է կատարելազործուի, անվերջ  
կատարելազործուի:

ԺԹ.

Բնութեան թագ ու պսակ համարւող մարդը  
դեռ շատ թշնամիներ ունի:

Դժբաղաբար դեռ մարդը մարդուն թշնամի  
է, մարդը մարդուն հալածող: Դա պարզ է, ինչպէս

արեկի լոյսը: Թողնենք ուրեմն այդ հարց և տես նենք, թէ մարդկալին օրդանիզմն ի՞նչ միջոցներ ունի վարակիչ հիւանդութիւններից պաշտպան- ելու համար:

Մեր օրդանիզմը հաղարաւոր տարիներ շա- րունակ դոյութեան կոիւ մղելով, արդէն ձեռք է բերել բնական և յուսալի միջոցներ վարակիչ հի- ւանդութիւններից պաշտպանուելու համար:

Իսքնապաշտպանութեան այդ միջոցների ու- սումնասիրութիւնը հնարաւոր դարձաւ միայն բակ- տերիոլոգիայի շնորհիւ \*):

Միկրոբները երկու կերպ են ազդում օրդա- նիզմի վրա. նախ իրանց անմիջական դօրութեամբ և երկրորդ՝ իրանց արտադրած թոյների—տոկոսին- ների միջոցով:

Միկրոբները, արեան հոսանքի մէջ ընկնելով, գնում են նրա հետ դէպի մարմնի զանազան օր- դանները և այնտեղ առաջացնում պէս պէս հիւան- դութիւններ: Ամենից շատ տուժում է երիկամունքը, որի պարտականութիւնն է զտել միկրոբները և դուրս մղել օրդանիզմից:

Իսկ միկրոբների արտադրած թոյները վարա- կում են զլխաւորապէս նեարդալին համակարգու- թիւնը, դրանով առաջացնելով մի շարք նեարդալին երեսյթներ, որոնք միշտ միացած են լինում վարա- կիչ հիւանդութիւնների հետ:

\* ) Տես բժ. Ա. Արծրունի «Վարակիչ հիւանդու- թիւններ» և բժ. Բուգուղեան «Ի՞նչ է կաշու հիւանդու- թիւնը» գրքյկները:

Դրա համեմատ էլ մեր օրդանիզմը յատուկ միջոցներ է ձեռք բերել՝ մի կողմից միկրոբների, իսկ միւս կողմից նրանց արտադրած թոյների— տոկոսինների դէմ կուռելու համար: Այդ միջոցները բաւական արբերւում են միմեանցից:

Պարիզի պրոֆեսոր Մեչնիկովն (ազգով հրէայ, առաջ Օդեսսայում էր պրոֆեսոր), որ առա շին անգամ պարզեց մեր օրդանիզմի ինքնա- պաշտպանութեան ամենազօրեղ միջոցը, որ յայտնի է ֆագոցիառ անունով:

Ինչպէս յայտնի է, արեան մէջ կարմիր և սպի- տակ գնդակներ կան: Կարմիր գնդակները աւելի շատ են, քան թէ սպիտակները. իւրաքանչիւր սպի- տակ գնդակին գույնս է մօտ չորս հարիւր կարմիր:

Բայց սպիտակ գնդակները աւելի գործունեաց են, աւելի կենսունակ ու շարժուն:

Զափազանց բազմաթիւ միկրոբներ կան մեր շուրջը, մեր կաշու վրա. նրանք օդի հետ մտնում են մեր թոքերը, կերակրի հետ—մեր ստամոքսը և այլն:

Բայց օրդանիզմը զօրեղ պատճշներ ունի նրանցից պաշտպանուելու համար, այն է՝ դրսից կաշին, իսկ ներսից—մաղասալին թաղանթը:

Ենթազրենք, թէ այս կամ այն պատճառով կաշին կամ մաղասալին թաղանթը վիրաւորուած է և միկրոբները, յարմար առիթից օգուտ քաղե- լով, մտնում են օրդանիզմը—արեան մէջ:

Բայց չպէտք է կարմիր, թէ այդ դէպում վարակումն անխուսափելի է:

Մեղանից ամեն մէկը բազմաթիւ անգամ կարել  
է մատր, ծակել—վիրաւորել է կաշին, բայց և  
այնպէս ոչ մի վարակում չէ ստացել:

Այն ինչ գրեթէ անկարելի է ենթաղրել, որ  
վէրքի մէջ այս կամ այն տեսակի միկրոբներ մտած  
վիճեն, որովհետև նրանք ամեն տեղ վխառւմ են  
մեծ բանակութեամբ:

Պարզ է ուրեմն, որ օրգանիզմը միջոց ունի  
նրանց լաղթելու և ոչնչացնելու համար, թէև միշտ  
էլ լաղթանակ չի տանում այդ միջոցը:

Հէնց որ միկրոբները մտնում են արեան մէջ,  
նրա սպիտակ զնդակները իսկոյն մեծ բանակու-  
թեամբ հաւաքւում են վտանգի ենթարկուած տեղը,  
շրջապատում են թշնամուն և կլանում, ոչնչացնում  
են նրանց:

Ահա հէնց այդ երեսլթը կոչւում է ֆաղոցի-  
տող: Օրգանիզմի համար դա մի հզօր դէնք է—միկ-  
րոբներից պաշտպանուելու դէնք:

Ինարկէ, այս կուում էլ լաղթում է նա, ով  
աւելի ուժեղ է, աւելի դիմացկուն:

Բացի դրանից մեր օրգանիզմը ինքնապաշտպա-  
նութեան ուրիշ միջոցներ էլ ունի, որոնց մասին  
առանձին կխօսենք «Կեանքը և միկրոբները» դր-  
բոցիում:

Այստեղ մի քանի խօսքով բացատրենք, թէ  
օրգանիզմը ինչպէս է կուում միկրոբների դէմ—այս-  
պէս ասած՝ քիմիական միջոցով:

Այդ միջոցը կալանում է նրանում, որ արեան  
քիմիական բաղադրութիւնը թուլացնում, իսկ եր-

բեմն բոլորովին ոչնչացնում է միկրոբների աղղե-  
ցութիւնը:

Հարկաւոր է ասել, որ միկրոբները շատ զդայուն  
են գէպի շրջապատող նիւթերը: Ենթաղրենք, թէ  
նրանք դանւում են մի այնպիսի միշավայրում, որը  
նրանց ամեն հնարաւորութիւն ատլիս է անելու  
և զարգանալու համար, որը համապատասխանում  
է նրանց բոլոր պահանջներին: Բայց եթէ ալդաեղ  
մի քիչ վնասակար նիւթ աւելացնենք, այն ժամա-  
նակ միկրոբների անումն իսկոյն կդադարի և նրանք  
վերջիվերջոյ կոչնչանան:

Այո՛, միկրոբներն այնքան զիւրազգաց են, որ  
վնասակար նիւթի ազգեցութեանը ենթարկւում են  
նոյն իսկ այն ժամանակ, երբ այդ նիւթի չնչին  
բանակութիւնը քիմիական վերլուծումով էլ չի կա-  
րելի որոշել:

Ահա հէնց այդ պատճառով էլ արեան բաղա-  
դրութեան ամենաչին փոփոխութիւնն անդամ  
կրօսարեր հետեանքներ է ունենում միկրոբների  
համար:

Օրգանիզմի բնական արտադրութիւններն էլ  
թշնամի են միկրոբներին: Օրինակ՝ բերանի հեղուկը,  
ըթի և թոքերի մազարը վնասակար են, իսկ ստա-  
մոքսի հիւթը կատարեալ թոյն է նրանց համար:

Ի

Այժմ տեսնենք, թէ օրգանիզմն ինչպէս է  
կուում այդ միկրոբների արտադրած հիւթերի—  
տոկսինների գէմ:

Նրա դործարաններից մի քանիսը, օրինակ՝ լեարզը, լեարզի վերևի զեղծերը և այլն, բոլորովին անվնաս են դարձնում տոկոսների ազգեցութիւնը:

Այսպէս օրինակ հաստատուած է, որ մի քանի վարակիչ հիւանդութիւնների ժամանակ դէպի լեարզը հոսող արիւնն աւելի շատ վնասակար հիւթեր է պարունակում իր մէջ, քան թէ լեարզից դուրս հոսող արիւնը:

Բայցի զրանից, եթէ բոլորովին հեռացնենք լեարզը—(էկի փորձը)—արեան շրջանառութիւնից, այն ժամանակ օրդանիզմն աւելի շատ վարակուի տոկոսներով, քան թէ բնական պայմաններում որովհետեւ լեարզն այլևս չի կարողանայ կատարել իր ախտահանիչ գերը:

Առհասարակ օրդանիզմն աշխատում է, ոչ միայն անվնաս դարձնել տոկոսները, այլև բոլորովին ոչնչացնել նրանց: Եւ այդ դործում մարմնի իւրաքանչիւր զործարանը իր համապատասխան գերն է կատարում:

Տոկոսների մի մասը աղիքների միջոցով է հեռանում, մեծ մասը—երիկամունքի, իսկ թոռոցիկ գաղերը—թոքերի:

Նոյն իսկ բնական պայմաններում մէզն իր մէջ պարունակում է զանազան թոյներ, որոնք օրդանական դործունէութեան արդիւնքն են կազմում:

Ետա հեշտ է այդ փաստն հաստատելու թէ, օրինակ, ճագարի արեան մէջ սրսկենք բոլորովին առողջ մարդու մէզը, այն ժամանակ ճագարը կմնի ճիշտ այն մասունքը թուառութեան այնպիսի նշաններ, որոնք շատ նման են վարցաւքի կամ դիմունի նշաններին:

Այդ միենոյնը պատահում է մարդուն, եթիւնում կրիկամունքը չափազանց բորբոքուած են լինում (նէջրիտ, Բրայգովի հիւանդութիւն): Գրապատճառն այն է, որ մէզը գուրս չի հանում օրգանիզմի թունալի նիւթերը. այս վերջինները հաւաքում են արեան մէջ և առաջացնում են ուրեմիա, կամ ուրիշ խօսքով ասած՝ մէզի արիւնութիւն, որից և մեռնում է մարդը:

Եթէ առողջ մարդու մէզի մէջ թունալի նիւթեր կան, ուրեմն հիւանդ մարդու մէզն աւելի շատ թոյներ կարող է պարունակել իր մէջ: Այդ բանը հաստատել կարելի է կենդանիների վրա կատարած հասարակ փորձերով:

Այսպէս օրինակ. Եթէ ճագարի երակների մէջ սրսկենք վարցաւք. կամ դիմունի հիւանդութիւն ունեցող մարդու մէզը, այն ժամանակ ճագարը կմեռնի արտաքայտելով թուառութեան այնպիսի նշաններ, որոնք շատ նման են վարցաւքի կամ դիմունի նշաններին:

Վերոյիշեալ հարցերի հետ սերտ կապով կապւած են այն հարցերը, թէ անհատը ինչպիսի նախատրամադրութիւն ունի, ինչ չափով դիւրազգաց է դէպի վարակիչ հիւանդութիւնները, ինչ չափով ընդունակ է պատուաստման և այլն:

Պատուաստի մասին շատերն արգէն լսած կլինին. դիմունի արգիքը հեշտութեամբ կարելի է բժշկել շինուկի միջոցով \*).

\*) Տես իւ «Առողջապահական նուեր նորատի կա-

Տեսնենք, թէ դիտութեան վերջին խօսքն ինչ  
է ասում այդ մասին:

Երբ որ կենդանի օրդանիզմի մէջ մի որեւէ  
թոյն (տոկսին) է ներս մտնում, այն ժամանակ  
օրդանիզմն սկսում է իւր հիւթերից պատրաստել  
հակաթոյն (անտիտոկսին), որի օգնութեամբ կըռ-  
ում է վարակիչ ազդեցութեան դէմ:

Շատ գէպերում օրդանիզմն աւելի հակաթոյն  
է պատրաստում, քան թէ հարկաւոր է ընթացիկ  
կռուի համար: Այդ աւելորդ հակաթոյնը մի հիա-  
նալի միջոց է օրդանիզմը ապագայ հիւանդութիւ-  
նից ապահովելու համար:

Հակագիֆտերիտային շինուկն էլ մի թոյն է,  
որի ազդեցութեան տակ օրդանիզմը ծշակում, պատ-  
րաստում է հակաթոյն—հակատոկսին: Իսկ այդ  
հակաթոյնը, ինչպէս ասացինք, բժշկում է զիփտե-  
րիտը և միենոյն ժամանակ ապահովացնում է օր-  
դանիզմը ապագայ հիւանդութիւններից:

Կենդանիների վրա կատարած փորձերը ցոյց  
են տուել, որ հակագիֆտերիտային շինուկը բաւա-  
կան երկար ժամանակ պահպանում է իր ազդեցու-  
թիւնը:

Պատուաստից յետոյ ծիու օրդանիզմը եօթը  
տարի շարունակ անմատչելի է մնացել զիփտերիտի  
համար:

Ճագարների վրա կատարած փորձերը ցոյց են

Նանց» և «Ժառանգականութիւն և դաստիարակութիւն»  
դրսյկները:

առւել, որ պատուաստի ազդեցութիւնը նոյն իսկ  
հետեւեալ սերունդին է անցնում ժառանգաբար:

Այդ բոլորից կարելի է եղբակացնել, որ շինուկը  
շատ մեծ փոփոխութիւն է առաջացնում օրդանիզ-  
մի մէջ, շատ մեծ ապահովութիւն է տալիս զիփ-  
տերիտից զգուշանալու համար:

Սակայն գրութիւնը մի քիչ փոխում է, երբ  
օրդանիզմն արդէն վարակուած է հիւանդութեամբ:

Այդ գէպերում չի կարելի ասել, թէ շինուկի  
սրսկումը միշտ էլ աջող հետեւանք կունենայ, թէև  
նա մի փրկարար միջոց է, եթէ իր ժամանակին  
գործադրուի:

Այս, փրկարար է բժշկական այդ միջոցը և  
նա տասնիներորդ դարի մարդկացին խելքի մեծ  
պարձանքներից մէկը կարող է համարուել:

Վերևում ասացինք, որ շինուկի պատուաստը  
կարող է օրդանիզմը պաշտպանել վարակումից:

Ուրեմն հարկաւոր է օգտուել նրանից, հար-  
կաւոր է խելացի կերպով գործադրել զիփտերիտ  
տուած այդ զէնքը:

Իսկ այդպիսի զէնքը մէկ շատ հարկաւոր է  
գոյսութեան կռում:

## ԻԱ.

Դոլութեան կորիւն այն հիմքն է, որի վրան  
շինուած է կենդանի բնութեան գեղեցիկ շէնքը:

Բոլուն անում են, կենդանիներն ապրում.  
ամեն ինչ հետզհետէ լաւանում է, զարգանում է:

Ցեսակները բազմանում են, ուժեղն առաջ է գնում, իսկ թոյլը ոչնչանում: Մի խօսքով ամեն մի արարած ուղում է ապրել և իրանից լետոյ սերունդ թողնել:

Այդ ծգուռմն է կեանքի հիմքը: Դա է, որ խթանի նման միշտ առաջ է մղում, ապրեցնել է տալիս թէ փոքրիկ բոյսին, թէ մեծ դազանին, թէ թռչուններին և թէ ձկներին, միջատներին ու զեռուններին:

Մի՛ մոռանար, դիտութիւնը, քննելով կենցազավարութեան հարցը, կռուի պահանջ է զնում: Իսկ բարոյականութիւնը այդ միւնոյն հարցում կարեկցութիւն ու սէր է պահանջում:

Այստեղ հակասութիւն չկայ, ինչպէս ասում է Դաւիդսոնը:

Գոյութեան կռիւր և բնական ընարութիւնը զարդացրել են մարդու մէջ խղճի, սիրոյ, կարեկցութեան և պարտականութեան բարձր զգացմունքները:

Այդ կռիւն ստեղծել է ամեն ինչ, նոյն իսկ մարդկային զգացմունքները:

Նոյն իսկ ամենաստոր արարածները գոյութեան կռիւ են մղում, աշխատում են իրանցից լետոյ սերունդ թողնել:

Նրանք արդէն սէր են զգում դէպի իրանց ցեղը, դէպի ժառանգները: Հէնց այդ սէրն է, որ նրանց մղում է դէպի գոյութեան կռիւր, իսկ այդ կռիւր իր կողմից զարդացնում և ուժեղացնում է սէրը:

Մարդու մէջ այդ զգացմունքը աւելի ու աւելի աճում է և վերջապէս աճում է այն աստիճանի, որ նա բարոյական օրէնք է գնում՝ մի՛ անիր ուրիշն այն, ինչ որ չես ուզում որ ուրիշը քեզ անէ:

Մրգեօք անմահ Դարվինի բացատրած զոյութեան կռուի սկզբունքը չի՞ հակասում մարդկութեան այդ բարոյական սկզբունքին:

Ո՞չ. ընդհակառակը, այդ սկզբունքը մեղ ստիպում է կռուել մարդասիրական այնպիսի հիմունքների համար, որոնք նպաստում են մարդկութեանը կատարելագործուելու:

Բաց արա աչքերդ ու ականջներդ բնութեան առաջ անհրաժեշտ է սովորել: Երբէք ուշ չէ հասկանալ այն ամենը, ինչ որ կատարում է աշխարհում: Հարկաւոր է դիտել և հասկանալ սրտով ու խելքով: Հարկաւոր է զգալ ու մտածել:

Ոնհրաժեշտ է դիտել, թէ մարդիկ ինչպէս են ապրում, թշնամանում և միրում միմեանց, թէ ինչպէս են կռուում իրար դէմ, ինչպէս են օգնում միմեանց:

Ինչ էլ որ լինի, մի՛ մոռանար, որ մարդը բնութեան ընարելին է, նրա թագն ու պսակը:

Մի՛ մոռանար, որ բոլորն էլ ապրելու իրաւունք ունեն. այս, իւրաքանչիւր աղջ, իւրաքանչիւր անհատ իրաւունք ունի ապրելու և ամեն մի ունձութիւն նրա ազատութեան ու բարօրութեան դէմ ոճրագործութիւն է, հրէշաւոր անբարոյականութիւն:

Ով որ ընդունակ է ուրիշի կեանքն ու ազա-

տութիւնը գնահատելու, նա արդէն իր մէջ կրում  
է ճշճարիտ քաղաքակրթութեան սերմերը:

Միայն ազատութիւնը, խելացի ազատութիւնն  
է, որ միշտ վառ է պահում մարդկային միաքը,  
որ ստիպում է նրան հրաշալի գաղափարներ սաեղ-  
ծելու: Միայն նրանով շունչ քաշել կարող է քա-  
ղաքակիրթ աշխարհը, միայն նրա մէջն է ազագայի  
երշանկութեան սերմերը:

Սէր և կարեկցութիւն դէպի բոլոր արարած-  
ները—ահա Մեծ Վարդապետի սրբազան աւանդը,  
ահա այն ամենի հիմքն ու աղբիւրը, ինչ որ ազնիւ  
ու գեղեցիկ է աշխարհում:

Տասնիննը երկար ու ծիդ դարեր են անցել  
այն օրից, երբ աշխարհ եկաւ ամենազաղափարա-  
կան, ամենահանճարեղ Մարզը. եկաւ և իր վեհ  
գաղափարներով թարմացրեց մարդկային ցեղը, ա-  
ռաջ քաշեց նրա ամենաաղնիւ ծգտումները և զրա-  
նով ստեղծեց մի նոր դարագլուխ մարդկութեան  
համար:

Նրա վարդապետութիւնը մեր առաջ բաց  
արեց այնպիսի գաղափարներ, որոնք բարձրացնում  
են մեղ մեր մանր ու դատարկ կեանքից, ճնշում  
են կրերը և մղում են մարդկանց առաջ ու առաջ:

Այդ վարդապետութեան հարմոնիան իր ազ-  
գեցութիւնը հասցնում է նոյն իսկ ամենազաժան  
չարագործի սրտին, հանգստութիւն է տալիս  
տանշուած հոգուն և նոր կեանք ու եռանդ է  
ներշնչում հիւանդ օրդանիզին:

—«Միրեցէք միմեանց» ասում է այդ վար-

դապետութիւնը և այդ խօսքերը բարձրացնում են  
մարդուն և ներշնչում են նրան հոգեկան մերժաւորու-  
թեան և բարոյական փոխաղարծ պարտականու-  
թեան գաղափարները:

Կրօնը մարդու ամենաբարձր գաղափարների  
արտայացտիչն է. իսկ կրօնի հիմքն է խոր զգաց-  
մունք և հաւատ գէպի բարձր ճշճարտու-  
թիւն: Այդ հաւատը կարող է լինել մարդու մէջ  
միայն այն ժամանակ, երբ նա սիրում է, երբ  
ընդունակ է բարեգներ անելու:

Հանեցէք սէրը մարդու միջից և այն ժամա-  
նակ նա կդառնայ մի չոր եսապաշտ. ոչնչացրէք  
կրօնը և այն ժամանակ մարդն իրեւ չարազործ  
կրացականչէ, թէ աշխարհում չկայ ոչ մի սրբու-  
թիւն:

Թէ առանձին աղջերի և թէ ամբողջ մարդ-  
կութեան բարօրութիւնը հիմնուած է ոչ միայն  
պատժող օրէնքների, այլ նաև կրօնական բարձրու-  
թեան հոսուած բարոյական գաղափարների վրա:

Այդ մեծ քայլն արել է բրիստոնէութիւնը,  
որովհեաւ միայն նրան նշանակութիւնն է, որ միշտ  
կանչում է. «սիրեցէք միմեանց...»:

Բարոյական կուլտը զրուած օրէնք չէ և ստի-  
պողական զաղափար չի պարունակում իր մէջ. նա  
մի բնական ուղեկից է այն մարդու համար, որը  
իրան քաղաքակիրթ հասարակութեան անդամ է  
համարում:

Այդպիսի կրօնը հասարակական կեանքի ամե-  
նապինդ հիմքերից մէկն է, որի աղջեցութեան տակ

Ճնշում և զարգանում է քաղաքակրթութիւնը:  
Ոչչայրէք նրան և այն ժամանակ կբանդուին թէ  
առանձին անհատների և թէ ամբողջ ազգերի միաց-  
նող սրբազն կապերը:

Իսկ մեր շուրջը կատարեալ եստափաշտութիւն,  
որը զինում է եղբօրը եղբօր դէմ, աղջու աղջի  
դէմ:

Հապա ուր է այն պարտականութիւնը, որը  
ուժեղին ստիպում է օգնել թույին, թեթևացնել  
նրա թշուառութիւնը, ապրելու միջոց տալ աղքա-  
տին, բարձրացնել ընկածին, բժշկել վիրաւորին:

Ո՞րքան կոտորածներ են տեղի ունեցել մեր  
օրերում—(Թիւրքիայում, Զինաստանում, Հարա-  
ւային Աֆրիկայում և այլն)—: Մարդկային զո-  
հերն հաշուելու հնար չկար. այնքան բազմաթիւ  
են նրանք:

Յիշեցէ՛ք հայկական կոտորածների (1895—1896)  
սարսափները. պատակերացրէք Մակեդոնիայում կա-  
տարող զաղանութիւնն ու արիւնհեղութիւնը և  
այն ժամանակ ձեր խիղճը մի սուր խայթոց կղզայ.  
Դուք կուղենաք մի թանձր քող քաշել այդ բոլորի  
վրա, որպէսզի չտեսնէք, չզգաք ու չմտածէք:

Բայց մի՞թէ կարելի է այդպիսի արիւնհեղու-  
թիւնը, ալդպիսի կոտորածները հաշտեցնել դոյու-  
թեան կոուի վարդապետութեան հետ:

Երբէ՛ք...

ի՞ն

Ինչպէս յայտնի է, կապիտալն ու աշխատանքը,  
կապիտալիստն ու բանւորը, խոշոր կապիտալիստն  
ու մանր կապիտալիստը շարունակ կոիւ են մղում  
իրար դէմ:

Այդ կոիւն էլ շատ մեծ առնչութիւն ունի  
գոյութեան կոուի հետ:

Ենթադրենք թէ նա մղում է խաղաղ ձեռվ  
առանց գործադուների և բանւորական ցուցերի:

Մի՞թէ նա այդ դէպքում էլ աւելի շատ զո-  
հեր չի տանում, աւելի շատ թշուառութիւն չի  
պատճառում, քան թէ սովորական պատերազմը:

Ի հարկէ, պատերազմը կործանում է ամբողջ  
պետութիւններ, աւելում է ամբողջ երկիրներ, բայց  
նա շատ արագ է անցնում, նրա հարուածները  
միշտ չեն գործում, ուստի կործանուած պետու-  
թիւնը շատ անդամ նորից ոտքի է կանգնում, աւեր-  
ւած երկիրը նորից ծաղկում, կճնդանութիւն է  
ստանում:

Բայց այդպէս չէ տնտեսական կոուի աղջե-  
ցութիւնը: Այդպէս անցողակի չեն նրա հարուած-  
ները մեր գիւղացիների ու արհեստաւորների հա-  
մար:

Նա դաժան կերպով մի կողմ է շպրտում սա-  
կաւահող գիւղացուն, խղճուկ արհեստաւորին: Նա  
բոլորովին ոչնչացնում է նորից առաջուայ դրու-  
թիւնը, առաջուայ կեանքն ու պարապմունքը ստեղ-  
ծելու հնարաւորութիւնը:

Պատերազմը սրերի ու գնդակների հարուածով ոչխայնում է բազմաթիւ մարդկանց, իսկ տնտեսական կափւը—տնտեսական հարուածով։ Քանի՛ քանի կան կափւը նիւանդանում և նոյն իսկ մեռնում են նի՞ մարդիկ հիւանդանում և նոյն իսկ մեռնում են միայն այն պատճառով, որ բաւարար օրսավարձ չունեն, որ իրանց կորցրած ոյժերը վերականգնեցնելու հնարաւորութիւն չունեն։

Նոյն իսկ ամենասարսափելի պատերազմից ու թալանից յետոյ տներն այնպիսի դատարկութիւն չեն ներկայացնում, բնակիչներն այնպէս չեն թշուառանում, ինչպէս տնտեսական կրիզիսների ժամանակ, երբ խղճուկ բանուորի տան կան կարասիները միմեանց յետերից դնում են փոխառու գանձարանները կամ անցում են վաշխառուների ձեռքը։

Տնտեսական ալֆմեան սիստեմը շարունակ դոկտերութիւն է պահանջում—թէ ունեցուածքի և թէ կեանքի դոհաբերութիւն։

Տնտեսական կոփւը միշտ շարունակում է իր ընթացքը, վայնուան, ով չի հասկանում այդ փաստը, ով ինքնապաշտպանութեան միջոցներ ծեռք չի առնում։

Կապիտալն իր շահերն է պաշտպանում, ուրեմն բանուորն էլ իրաւունք ունի նոյնն անելու՝ իր շահերը պաշտպանելու։

Եւ ինչու պէտք է նա հրաժարուի ինքնապաշտպանութիւնից, երբ զրանով մարդկայել պայմաններ է պահանջում, երբ մեծամասնութեան ֆիզիկական ու մտաւոր զարգացմանն է նպաստում։

Ուրեմն ով որ «կոփւ» չի ուզում, թող նա

ազգէ այդ փոքրամասնութեանը վրա, որ ճնշում է ժողովրդի մեծամասնութեանը, որ կեղեքում, շահագործում է ուրիշներին։

Ոմանք բողոքում են աշխատաւորների ընկերութիւնների դէմ. բայց անհիմն է այդ բողոքը։

Այդպիսի ընկերութիւնները ծգտում են՝ բարձրացնել օրավարձը, կրծատել աշխատանքի ժամերը, պակասեցնել չքաւորութիւնը և բաւարարութիւն տալ անհրաժեշտ պահանջներին։

Միանգամացն արդարացի և նպաստակայարմար ծգտում է գա, ուստի աւելորդ է նրա առաջ արգելքներ գնելլ։

Դեռ ոչ մի գասակարդ այնպիսի դիտակցութեամբ չէ ընդգծել իր նպատակն ու գերը, ինչպէս աշխատաւոր դասակարգը։ Դեռ ոչ ոք այդպիսի համարձակութեամբ չէ կանգնել պատմութեան ճանապարհի վրա։

Հասարակութեան իւրաքանչիւր խաւը միայն բազմաթիւ փորձերի և մշտական ինքնակրթութեան միջոցով կարող է ներքին ոլժ ծեռք բերել, միութիւն առաջացնել։ Առանց դրան անհնարին է յաղթանակը, որքան էլ որ իրաւացի լինի կոփւ։

Բանւորական և առհասարակ պրոֆեսիոնալ ընկերութիւնները մեծ գեր են կատարում այդ տեսակէտից։ Դրանք նպաստում են մեր ժամանակի սոցիալական ուժեղ շարժմանը։

Ի հարկէ, այդ շարժումը միայն ստամոքսի հարցից չէ առաջացել։ Նրա հետ կապուած են

մարդկալին արժանապատռութեան, ազատութեան  
և փոխադարձ յարսթերութեան հարցերը:

Նոյն իսկ միմիայն ստամբսի համար մղուած  
կոիւը զարգացնում է մարդկանց մէջ կարգապա-  
հութիւն, զոհաբերութեան պատրաստականութիւն,  
համերաշնութիւն և որոշ գիտակցութիւն ու հաս-  
կացողութիւն տնտեսական կեանքի մասին:

Այս ամենը շատ գեղեցիկ է, բայց մենք գեռ  
բոլորովին կուլտուրապէս չենք զարգացած այդ գա-  
ղափարները բմբոներու և հասկանալու—դորա հա-  
մար հարկաւոր են տասնեակ տարիներ:

Ցաւօք սրտի պէտք է ասել, որ մեզանում  
բանուորների և արհեստաւորների հարիւրից 99-ը  
անդրադէտ է, մինչդեռ Եւրոպայում լուսաւորու-  
թիւնը այնքան արադ քայլերով է առաջ գնացել,  
որ հասարակ բանուոր տարրի ստուար մեծամաս-  
նութիւնը, համարեա բոլորը, ոչ միայն գրադէտ են,  
այլ և լրագրներ են ստանում իրանց հաշւով և կար-  
դում:

Մենք, ասիացիներս գեռ շատ բան ունենք  
սովորելու այդ ուղղութնամբ, գեռ շատ լետ ենք  
Եւրոպայի քաղաքակիրթ ազգերից:

Այո՛, մենք պէտք է զարկ տանք մեր կրթու-  
թեանը, պէտք է մեր անցեալն ու ներկան ճանա-  
չենք և չանք ու եռանդ չխնայենք զարգանալու,  
առաջ գնալու համար:

Եւ որքան գեղեցիկ դասեր կարող է տալ մեզ  
պատմութիւնը, անցեալի պերճախօս վկան:

Ուրեմն սովորիր բո ազգի պատմութիւնը: Նա

հեթիալթ չէ: Պատմութիւնը մարդկալին տառա-  
պանքների և թշուառութիւնների մի շարք է:

### ՄԻ ՔԱՆԻ ԽԾՈՍՔ ԵՒՍ

Մարդկալին երշանկութիւնը հիմնուած է նիւ-  
թական և բարոյական բաւականութեան վրա:

Սյն ամենը, ինչ որ մեր երկրի փառքն ու  
պարծանքն է կազմում, ինչ որ մեծ բարիք է հա-  
մարւում, գոյութիւն է ստացել բոլոր ազգերի, բո-  
լոր մարդկանց փոխադարձ չանքերով:

Ո՞վ չի ուղենայ իր կեանքը զարդարել այդ  
բարիքներով. ո՞վ չի ուղենայ կարելոյն չափ շատ  
բաւականութիւն վայելել:

Դրան է ծգուում մարդկալին գիտակցող կամքը:

Սպատութիւնը առաջին անհրաժեշտ պայմանն  
է, որպէսզի մարդ իրան բաղդաւոր զգայ:

Սպատութիւն, որպէսզի մարդ իր մարմնի, իր  
մտքերի ու գործողութիւնների տէրը լինի:

Եթէ չկայ ալգապիսի պայման, եթէ մարդ զըրկ-  
ւած է ազատ կամքից, այն ժամանակ նրա կեանքը  
կորցնում է իր փայլը և դառնում է մի ճանր  
բեռ:

Բայց անհատական ազատութիւնը չպէտք է  
հակառակ լինի բնդհանուրի բարօրութեանը, չպէտք  
է վնասէ շրջապատողների երշանկութեանը: Հա-  
կառակ գէպքում նա կդառնայ մի լանցանք, որի  
համար քաղաքակիրթ ազգերը յատուկ օրէնքներ  
են հնարել:

իսկ եթէ այդքուն թանկ է անհատական աղա-  
տութիւնը, հապա ո՞րբան թանկ կարող է լինել  
մի ընդհանուր անցեալ, ընդհանուր լեզու ունեցող  
ամբողջ ազգի ազատութիւնը:

Իւրաքանչիւր ազգ ապրում է իր նախնիքների  
արագիցիաներով, որոնք երկար դարերի ընթաց-  
քում յդկուել—կոկուել են և ազգային յատկանիշ-  
ներ են դարձել:

Նրա կրօնական աշխարհայեցողութիւնը  
հիմնուած է լինում այնպիսի նշանառութիւնների  
վրա, որոնք հասկանալի և թանկ են նրա համար:

Նրա բարոյական սկզբունքները ծնունդ են  
ստանում անցեալ ու ներկայ կեսնքի պայմաններից:

Նրա համար անձեռնմխելի սեփականութիւն  
է մայրենի լեզուն, որի միջոցով նա արտայալտում  
է իր մաքերն ու զգացմունքները:

Ելդ լեզուն նրա որբութիւնն է, նրա կեանքի,  
նրա գործերի անբաժան րնկերը:

Դա մի պատմական երեսյթ է, որ զոյութիւն  
է ստացել մարդկային հասարակութեան հետ միա-  
սին:

Լեզուի և աշխարհահայեցողութեան տարբե-  
րութիւնը մի մեծ չարիք է ոչ միայն յետամնաց,  
այլ և քաղաքակիրթ ազգերի փոխադարձ յարա-  
բերութիւնների համար:

Հարկաւոր է մի ընդհանուր, համամարդկային  
զաղափար, որը կարողանար գէթ մասամբ թեթե-  
ւացնել այդ չարիքը, գէթ մասամբ սանձահարել  
ամբոխային թշնամութիւնը:

Ահա հէնց այդ տեսակէտից շատ մեծ ժա-  
ռայութիւն է արել Մեծ Վարդապէտը, որը մարդ-  
կային սրտի խորքելոր թափանցելով, բաց է արել  
նրա առաջ բարոյական վերածնութեան մի նոր  
ճանապարհ:

Բայց եթէ մարդկանց մի խումբ, մի հասա-  
րակութիւն անցեալի ուներկայի բնական պայման-  
ներով շաղկապուած է, նա պէտք է ապրի երբե-  
միութիւն: Նա իրաւունք ունի ապրելու:

Իւրաքանչիւր ազգի բնական զարգացումը հնա-  
րաւոր է միայն բացարձակ ազատութեան ժամա-  
նակ, երբ արտաքին կոպիտ ոյժը չի ճնշում վերե-  
ւից, երբ չի ծդտում իշխել ու շահագործել այդ  
ազգի կեանքն ու ազնիւ աշխատանքը:

Զզարդացած ցեղը հեշտութեամբ է քայլքայ-  
ւում, հեշտութեամբ է ընդունում իր կեանքի պայ-  
մանների փոփոխութիւնը: Նա կամաց-կամաց, ան-  
նկատելի կերպով կտրւում է իր անցեալից և ծով-  
ում է շրչապատող աւելի բարձր, աւելի քաղա-  
քակրթուած ու զօրեղ տարրի հեա: Նա զրանով  
ոչինչ չի կորցնում, այլ ընդհակառակը շահւում է:

Բայց երբ ազգը հպարտութեամբ է լիշում իր  
անցեալը, իր փայլուն զործիչներին, իր կուլտու-  
րական զործունէութեան յիշատակները, երբ նա  
հասկանում է իր հոգեկան արիութիւնն ու աբժա-  
նապատութիւնը, այն ժամանակ նա սարսափով  
կնայէ ամեն մի անարդարութեան վրա, որ նրան  
սպառնում է:

Նա ուզում է խօսել իր նախնիքների, իր մայ-

ըենի լեզով, ուզում է հաւատալ իրա համար միս  
ու արիւն դարձած ճշմարտութիւններին, ուզում է  
գործել իր հոգու և սրտի թելագրութեամբ, ինչ-  
պէս որ Աւստրո-Ունգարիան:

Այլպիսի աղքերը երկար, շատ երկար կը  
կռուեն իրանց գոյութիւնը, իրանց ազատութիւնը  
պաշտպանելու համար. կռուեն քանի որ կեանք  
ունեն:

Որքան մեծ է աղջի կուլտուրական ոլժը,  
նոյնքան հեշտ կլինի նրան մղած կռիւր:

Մեր աղջն ալժմ ունի յախանի քաղաքական  
ազատութիւն:

Ուրեմն նա պէտք է վերածնուի կուլտուրա-  
պէս, պէտք է ամրապնդէ իր կրօնական, բարոյա-  
կան և աղջանական հիմքերը, որպէսզի կարողա-  
նայ դիմանալ զանազան փոթորիկների:

Բայց ունե՞նք, արգեօք, հարկաւոր ոլժեր, լու-  
սաւոր մտքեր և զգայուն սրտեր:


Միայն մտաւոր ու տնտեսական առաջաղի-  
մութեամբ կարող ենք ձեռք բերել մեզ համար  
վայելուչ աւպագայ: Գոնէ ալժմ աշխատենք խելացի  
կերպով, զարգացնենք մեր մէջ ինքնազործունէու-  
թեան ողին և յետ չմնանք եւրոպական աղքերից:

Ինքնազաշտպանութեան բնագգը յատուկ է  
ոչ միայն առանձին անհատներին, այլ և հաւաքա-  
կան մարմիններին՝ ամբողջ ցեղերին, համայնքներին  
ու աղքերին:

Սնմահ կմնայ նա, ով իր ջանքերով, իր արիու-  
թիւնով ժողովրդի ուղին կթեթևացնէ, ով թշուա-

ով աչքից արցունքը կսրբէ, ընկնուածին յոյս կը  
տալ, թուլին—օգնութիւն, հալածուածին—սէր ու  
խնդութիւն:







13338

575.4  
T-91